



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

ԵՊԻՍՏՈՒԼՈՒԹՅԱՆ

Ի ՎՈՍՏԱՆԻՍ

ՏՊԵԼ

Ի ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ

Ի ՏՊԱՐԱՆԻ Յ. ՄԻՒՀԻՆՏԻՍԵԱՆ

ՍԿՐԿԻ

1535

1/65



Սևրակ

2013

1 OCT 2009

1535

ԵՊԻՄԵՆԻԳԻՒՄ*

Ի ՎՈՍԲՈՐԻՍ



529

ԵՒՐՈՊԱՅԻ արեւմտեան ու՝ արեւելեան պետութիւնները գրչի ձայնով և քաղաքագիտութեան լեզուաւ իրար համոզել չի կրնալով, տեսանք որ, 'Կանուբի և Պոնտոսի եղերքը թնդանօթի որոտմամբ և ռումբի բարբառով խօսիլ սկըսան իրարու :

Այլիմէնիդէսէն մինչեւ վերջին հայուն արժան է ուշով դիտել որ, մարտնչող պետութեանց անիրաւին ու արդարին ալ նախիշխան և պաշտօնեայ և առաջնորդ կեցողներուն ամմենն ալ՝ անկատար մարդկու թեանս պայմաններուն մէջ կատարելագոյներն ու առաջիններն են : Ալ արդարեւ ուղեղնին կենցաղագիտութեան մէջ տողորած, գրիչնին հանձարոյ և սուկալի հմտութեանց մէջ ջրդեղած, լեզու-

* Հին յունաց խնամուեններէն մէկը, որուն համար շիտուն տարի շարունակ բնացաւ կ'ըսեն :

4142
41




նին պերճախօսու թեան կայծակնե րով պա-
րուրած , և շատն ալ՝ բազուկինն Արէսի
հրահանգներուն մէջ բրտացած մարդիկ
էն :

Աղէկ , Ապիմէնիդէս մանաւանդ թող
միտ դնէ որ , ասոնց ամենն ալ բանին զօ-
րութեամբն իրար իրարու համոզմանցը
քաշել չի կրցան , ու էն վերջը Արէսի ու
Պալլասի միջոցներուն սպաւինելով զէնքի
ձեռք զարկին , և իրարու կործանու մն
կ'սպառնան կոր :

Ա՛յ ասագին և հսկայ ազգաց իրար
զարնուելու դըրդէն մանր պետութիւն
ներն ալ սասաներ , անոնք ալ կարգաւ զէն-
քի ձեռք կը զարնեն կոր անորոշ և անըս-
տոյզ նպատակաւ :

Հին աշխարհին կէսը թունտ ելեր ,
« պատերազմն աս ամառ չի լմնայ նէ ,
կ'ըսեն ոմանք , Պունիկեան կամ Պեղոպո-
նիսեան պատերազմը պիտի ունենանք » :
Արիւնհեղութեան արհաւիրքը քաղաքա-
կիրթ ազգաց մթնոլորտը պատելով , ամեն
սիրտ հոգերու մէջ ընկղմեր է , ամեն տեղ
երկիւղն ու վարանքը՝ յոյսը հալածելով
ինգնադ լուխ կը թագաւ որեն կոր :

Ալիմպոսի կատարը ժողովուող Հոմերա-
կան աստուածներն ալ՝ Ղանուբեան իշ



1535-2013

2.8.1528

խանութեանց մէջ եղած անխնայ և անողորմ ջարդը տեսնելով, այլ չեն կրնար կոր մարդկային ցասման վրայ խնդալ. վասն զի աչուրնուն զարնուածը ոչ Հեկտորի կառքին է, ոչ Աքիլլէսի վահանը, և ոչ ո՛ր և իցէ երկու դիւցազանց մենամարտութիւնը: Իայց մէջերնին Հեփեսոսս խիստ ծիծաղասէր ու կատակասէր է: Այսինքն ձրգածներն Արէսն ու Աստղիկն ալ ըլլայ նէ, չամչնար արեւուն դէմը կը ձգէ, որ Աիք տեսնան ու բերկրին: Վիցական կաճառին տխրութեանը դարման մը ընելու համար, վերջապէս Աստորի վրայ ծիծաղի նիւթ մը նշմարեց ու անոնց ցուցուց, անոնք ալ վայրկեան մը արիւնսողող ձորերէն ու բլուրներէն աչուրնին այն կողմը դարձունելով չի կրցին ծիծաղնին բռնել: Այլէ, անգամ մը մեկը ալ հսն աչք դարձունենք, և ճաղատ Ասիմէնիդէսի պատրուտած գրգռեակն ու ծիծաղաշարժ տեսարանը նկատենք:

Ա.

Աստորի եղերաց վրայ բնակող զանազան ազգաց մէջ փոքրիկ ժողովուրդ մըն ալ կայ: Աշխարհի վրայ բոլոր բովանդակ

կոնակնին հանդերձ մը՝ և սրտերնուն մէջ
նապատասկ մըն է ունեցածնին : Նսել կ'ու-
զեմ թէ, ոչ հարուստ են և ոչ իրահա-
մարձակ : Համեւրուական կարծուած պա-
տերազմին յաջող կամ ձախող վերջը իրենց
ճակատագրին վրայ ալ մեծ ազդեցութիւն
սխտի ունենայ : Իրենք ալ նոր անցքերուն
զարհուրանացը մէջ ծփացող աղգաց բաղ-
դակից ըլլալով, հարկաւ իրենց սիրան ալ
ուրիշներուն սիրան աւելի զուարթու-
թիւն չունի, և միտքերնին ալ գալիքին
համար միւսներէն աւելի կասկածով կը
տանջուի կոր :

Ալ սակայն՝ ան ժամանակն որ խենթը
վախով և խելացին սոսկամբ բռնուեր,
ու աչուրնին միայն շորս կողմերնին կը պը-
տրուցընեն, այն ժամանակը, կ'ըսեմ, աս
ժողովուրդը իրարանցումի մէջ ինկաւ :
Աչուրնին խոժոռ է, ճակատնին կնճռած,
և բազուկներնին ալ եռանդալից շարժ-
մունքներ կ'ընեն : Շրթունքնին կը շար-
ժի, բայց Արիսի գոռալու ձայնէն շշու-
շի չափ ալ չի լսուիր : Աերջապէս, ինչ որ
է նէ, երեւցածը վէճ մըն է :

Արդեօք՝ անիրաւ պահանջմունքներով
աշխարհի խաղաղութիւնը բարձողին տա-
լիք զգօնացուցիչ խրատներուն ձեւերն է

եւ անդագին վիճածնին : Արդեօք դաշնա-
կից տէրու թեանց ցասումն ու սպառնա-
լիքները զիջուցանելու ճառերը կը հինեն
կոր : Արդեօք՝ հասարակաց աղետից վա-
խովը սրտաբեկ եղող ժողովրդոց սիրաե-
րուն յոյս և խրախոյս տալիք շրջաբերակա-
նի մը բառերը կ'ստուգաբանեն կոր :
Կամ թէ արդեօք՝ ամենը մէկդի ձգելով,
իրենց տխուր անցեալէն և դժբաղդ ներ-
կայէն իրենց կեղակարծ սպագային վրա-
յօք խելք և խորհուրդ քաղելու ճիգերը
կրնեն կոր իրարու հետ :

Թնդանօթներուն ահագին և անընդ-
հատ ձայներուն ետեւէն վայրկենի մը լը-
ւու թիւն յաջորդելով, այն վայրկենին մէջ
ասոնց բզգուքը լսուեցաւ, և բանին կը-
ռիւ և ոչ վէճ ըլլալը և կռուին նիւթն
ինչ ըլլալը իմացուելով, մարդիկ ալ չի
կրցին խնդալնին բռնել : «Նաքը Հայոց
եկեղեցւոյն ալ դու խ է, և Հայերն ալ ա-
ռանց Հռոմայ եկեղեցին մտնելու փրը-
կու թիւն չունին : » Ահա կռուողներուն
պաշտպանած կամ մերժած նիւթն ու ա-
ռարկու թիւնը, և ահա մարդոց մտացի-
ներուն ալ խնդալու կամ արտասուելու
առիթը :

Աս հինցած փիթտած և հազար աղգե-

հազար անգամ մերժուած և հերքեալ
նիւթը որչափ որ ըստ ինքեան և Հայոց
նկատմամբ ծիծաղելի է նէ, տարագէտ
ժամանակի մէջ նորէն յուզուիլն է որ ա-
ւելի ծաղրական կ'ըլլայ կոր: Վայց ինչ և
իցէ, աշխարհին մօրուքը բռնկած ատենը
Հայերուն ծխափայտ երկնցունելը չեմ
կարծեր որ պատեհ թուի: Վաքին գըլ-
խուն ոտք եղողները բոլորն ալ արքայու-
թեան բալլիքն ու անցագիրը վաղուան
համար աս օրուքնէ առեր, ու Հայերն
ալ հետ քաշելու և քղուելու հոգերնին
միայն մնացեր է աս նեղ ատենին մէջ:

Գնա բանդ Աստուած սիրես. թէ որ
իրենք ամենն ալ չիտեն նէ, գոնէ մէկ
բանիքուն մըն ալ չի կայ մէջերնին գիտ-
ցող որ, ասանկ հեռիւ ատելու թեամբ և
ինքնահաւանու թեամբ շնչող պապական-
ները՝ Վաքին գրպանն ալ մտնան նէ, երկ-
նից դրանն առջին հարկաւ խուզարկու
մաքսապետ մը կայ, որ երկնային քաղա-
քէն ներս մտնալու արգիլուած ապրանք-
ներն ու երբեմն անարժան Վաք մը ան-
գամ յաւիտենական գահավէժներէն սան-
դարամետն 'ի վար պիտի նետէ: Իրենց
խաւար հանդերձելոյն վրայ այսչափ տա-
րակուսի տակ եղողները՝ ինչ խելքով աս

Ժամանակն ընտրեցին մտքերնուն չհասած
վէճը նորոգելու :

Ինձի կուգայ որ իրին բուն էութիւնն
ու պարզամիտ խռովարարը նշանակելու
ենք որ , անխտրաբար ամենուն մեղքը
չառնուի : Աս բացարձակաբար և կարեկ
ցարար կը յայտնեմ որ , աս անսեղի և
ամօթալի վէճին յուզողը Ապիմէնիդէս
ի՛նք ալ չէ , իր քունին փախչիլն է : Ա ըս
տահ եմ որ , Ապիմէնիդէս ի՛նք ալ զղջա
ցած է քունէն տարածամ արթննալուն .
բայց ի՛նչ կրնանք ըսել իրեն . ոչ ծանրա
ցած քունը հալածելու , և ոչ փախստա
կան քունը կաշկանդելու բաւական չէն
հողածնաց աչքերը : Ապիմէնիդ բանաս
տեղծ է , և հետեւաբար բնութեամբ ալ
խիտ դիւրազգած . բնութեան հակա
ռակ ազգմանց ոչ մէկուն և ոչ միւսոյն
դէմ չէր կրնար դնել : Ապիմէնիդէսի մի
ամառութիւնն ու անմեղութիւնը գիտնա
լովս , ես անիկայ չեմ կրնար տակէ աւելի
խատութեամբ դատել , և իր արկածները
երկրորդ յօդուածով մը գրելէս առաջ ,
ընթերցողներուս ներողամտութիւնը կը
խնդրեմ անոր համար . վասն զի ինչպէս
կը յուսամ ասպացուցանել , ըրածն իր
ձառքը չէ :

Ապիմէնիդէս Շարականաց բացատրութեան հռչակաւոր հատորը մամուլէն նոր դուրս ելած՝ և թուղթն ու մեղանը չի չորցած, անյագ ակործակաւ կարդացեր, և անձառ և անպատում բերկրութեամբ զմայլելով ըսեր է : « Աստ » ուած իմ գոհանամ զքէն, որ աս մեծ » մատենին հոգին շնչեցիր հեղինակին ու » ղեղը : Աս մատենին տակը Հայոց քա » մակները պիտի ճմլին, լեզուներն պիտի » կղպուի, Հռոմայ եկեղեցւոյ գլխոյն » դէմ բերան չի պիտի կրնան բանալ, և » անբան ոչխարներու պէս գլուխներն կա » խած՝ Հռոմայ փարախէն ներս պիտի » մանան : Գոհանամ զքէն, որ աս կայ » ծակնացայտ գիրքը մեղաւոր շրթամբքս » կարդալու և լրմնցունելու իս արժանի » բրիր : Արդ արձակեա՛ զիս ՚ի խաղաղու » թիւն, զի տեսին աչք իմ զփրկութիւն » հերետիկոսաց : »

Աս արտառ ու չ աղերսը մատուցանելէն ետեւ, ամպերն ՚ի վար Վանիմեդն յա վրշտակող հսկայ արծիւին նման արծիւի մը արեւուն ճառագայթներէն թեւերը շողալով իջնալը կը տեսնայ յանկարծ, և

կարծելով որ հրեշտակն է հոգին առնելու
կուգայ կոր, աչու ընեքը կը գոցէ, և Պ*** ի
հովասուն ծառերուն տակը ընկողմնելով
եռսուներինը տարի կը քնանայ :

Այսիմէնիդէս առջի անգամին Արետա-
ցի կամ Վնոսացի եղած ատենը յիսուն
տարի քնացեր էր : Աս անգամին հարիւր
յիսուն տարի քնանալուն շատ հաւանու-
թիւն կար, և իրեն համար ալ շատ աղէկ
կըլլար թերեւս. բայց Օտէսայի ումբա-
կոծու թեան որոտմունքէն յանկարծ կար-
թըննայ տեղէն կը ցաթկէ, և մէկ կողմէն
թնդանօթներուն անընդհատ արձակումը
լսած տեղը, մէկ կողմէն ալ Ասորի մէջ
առագաստի վրայ սլատերազմական նաւեր
անթիւ մարդոց բազմութեամբ բեռնա-
ւորեալ տեսնալով, « ՄՏ, կ'ըսէ, փառք
» հոգիս չառնող արարչիս, ահա հայկա-
» կան ոչխարները նաւերը լըցեր Հոսմ
» կը տանին, և նախատօնական հանդիսի
» թնդանօթներն ալ կը հնչեն կոր : Ար-
» թամ այն նաւիրական նաւերը բարձող
» ծովուն ջրովն աչու ընեքս լուամ քունէս
» սթափիմ : »

Աս ըսելով կը ծռի գիրքն առնելու, և
կը տեսնայ որ, գիրքը անձրեւի արեւու
և խոնաւութեան երեսէն փթտեր ան

վերժանելի է եղեր, մէջ տեղերէն մինակ
քանի մը տող մնացեր է որ հազիւ իր
վերջի տետրակին նիւթ մատակարարելու
բաւական պիտի ըլլար :

Ապիմէնիդէս աս բանին մեկնութիւն
մը չի կրնար գտնալ, և քաղաքը մտնալով
քաղաքը չի ճանչնար : Արնայի որ ամեն
բան փոխուեր է իրեն համար : Իր տե-
սած ճանչցած ու իր խելքովը թերեւս եր-
կու ժամ առաջ թողած բաներուն ամենն
ալ աւլուեր, տեղն անձանօթ և անակ-
նունելի բաներ եկեր է : Ասան զի կը նա-
յի որ, նախ ամեն մարդ անխորաքար
իրար կը բարեւեն ու եղբայր կը կոչեն կոր-
երկրորդ, տեղ մը փակեղ (գալփաք) չի կայ :
Ան ատենը ագռաւը կը խօսի, և Ապիմէ-
նիդէս աչքերը գրքին աւերակին վրայ
գարձունելով վհատութեան մէջ կ'իյնայ :

« Ա՛ւր եմ, կ'ըսէ, արդեօք արծիւը
» իս վերցուցեր . . . բայց ես քնացած տե-
» ղըս գտայ իս արթնցած ատենս, ոչ .
» արծիւն զքաղաքը վերուցեր է բնակիչ
» ներուն հետ, և տեղն ուրիշ քաղաք մը
» բերեր է բնակչօքը հանդերձ : »

Ապիմէնիդէս աս անորոշ մտածութի-
ներն ընելով ոտքին մէկը աջ և միւսը ձախ
թափառական գացած տեղը, « Ա՛լ Ապի-

” մէնիդէս ” ըսելով ճիտը կիցնայ մէկը , ու
կը կրկնէ . “ Ա՛յլ Այպիմէնիդէս , ուրուա-
” կամ նդ կը տեսնամ կոր արդեօք : Այց
” ուրուական՝ մեռելինը կը տեսնուի . եր-
” կինք ելլոյը հոգւով մարմնով կ'ելլայ .
” Ի՞նչպէս եղաւ որ իջար . և նորէն իս
” սա անիծեալ աշխարհին մէջ մինակ
” թողուս երթամ պիտի : Առսուներինը
” կամ քառսուն տարի առաջ յանկարծ
” աներեւու թացած ատենդ՝ ալեւորեալ
” ասառածաբաններն ըսին թէ , Հայոց
” հետ ունեցած անհաշտ ատելութեանդ
” ու ռիսերիմ թշնամու թեանդ փոխարէն
” ողջ ողջ երկինք փոխադրուեր ես . և հը-
” րեշտակին վրատ իջնալը տեսնողները
” սոսկալով փախեր , եկեր քաղաքը պատ-
” մեր էին : Ա՛յլ Այպիմէնիդ Այպիմէնիդ .
” երկինք քեզ դիտամաք խրկած պիտի ըլ-
” լայ , որ մահու արժանի աս ազգին ար-
” մատն անիծես որ չորնան : Ա՛հ , թէ որ
” չի չորնան նէ մեզ պիտի կլլեն , և ար-
” դէն մեր թշուառական զաւկները կու-
” բուստնին կը դիմեն կոր իրենց եղբայր
” անոնք անուանելով : Քառսունըհինգէն
” յիսունըչորս թուականները ի՞նչ չարա-
” գուշակ եղան մեզի համար . . . : ”
Այպիմէնիդէս իր սղայու թեանը ընկեր

անձին ամեն մէկ բառին արտասանու թէր
կը դանդաղէր կ'ապշէր ու կ'այլայլէր կոր :
Արկինքն ելլալն ու իջնալը և եռ սունըինը
տարի բառերը՝ իր միտքը անստոյգ անու-
րոշ և մթին մտածու թեանց մէջ կը յու-
զէին կոր : Մայց աս տխուր պատմու թեց
վերջը յիսունըչորս թուականին ձայնն աւ-
ռածին պէս , սթափեցաւ , և առջի ան-
գամի յիսուն տարուան քունը յիշելով
տարակոյսը լուծաւ :

— Աղբայր Վարկոս , ըսաւ տրամու-
թեամբ իր բարեկամին , ուր գացած ըլ-
լալս և ուրիշ գալս Մտուած գիտէ : Մայց
գունն ինչ կ'ըսես կոր , Հայերը Հռոմայ
փարախը չի մտնն : — Մեզ հակառակն՝ փա-
րախին մէջ եղողներուն գուրս ելլալուն
վախը կը քաշեն կոր Վերապատուելինե-
րը : — Շարականի բացատրու թիւնը խեր
չըրան խտասիրաներուն : — Անկէ ետեւ
ինչ գիրքեր ալ ելաւ , որ ամենը մէկէն
ներհակ ազդեցու թիւն ընելու ծառայե-
ցին մինակ : — Վարդապետները անձամբ
և բանիւ ձառուրնուն եկածը չէն ըներ
կոր : — Մտու ատեն մը չեղածէն աւելին
կ'ընեն կոր իրարու գէմ : — Իրարու գէմ :
— Այս , իրարու գէմ : Իրար հերետիկոս
կը գանաւ կոր , իրար կը հայհոյեն , իրար

կը նզովեն, իրար սրբաբնու թեան բոցե-
րուն արժանի կը համարին, և ամենը մէ-
կէն կարգաւ և հրապարակաւ Հայերը
նզովելէն և ուրանալէն ետեւ, իրար ա-
նանկով ալ չի կրնալով հաւտացընել, Սետ-
րոսի յաջորդին առջին իրարու ՚ի խաչ հան
զբոսա կը սյուան կոր:

— Իսկ մեր միաբանու թիւնն ինչ կընէ
կոր առանձին:

— Չեր միաբանու թիւնը բոլորովին
Բաբելոնի աշտարակին պէս կը քայէ կոր:
Սմանք քեզի պէս դժնդակ և գովելի նա-
խանձաւորու թիւն մը կը ցուցընեն կոր
Հայոց դէմ: Սմանք յերկուս հետս կա-
ղալով, Հայերուն քով բաբու թեան լու-
ծին դէմ կը խօսին, և ուղղափառներուն
հետ ալ հրապարակաւ հայու թեան դէմ
կը բողոքեն: Սմանք ալ միւս միաբանու
թիւններուն հետ ունեցած ատելու թիւ-
նովն՝ ծածուկէն գլխովին Հայոց կողմը
կը բռնեն, ու յանդիմանու թիւններ կը
կրեն կոր իրենցներէն: Այլ ամենը մէկէն
միւսներէն աւելի խորամանկու թեամբ
վարուելու ջանալով, հռոմէականներէն
ուրացողի, և Հայոցմէ ալ ճիզու իթի ա-
նուն ժառանգեցին: Այլերնին քանի մը
նորելուք ալ կայ որ, նոր մոլորու թիւն մը

քարոզելով, « Արօնից տարբերութիւնը,
կրօնն, մեզ իրարմէ զատ պահելու պատ-
ճառ չի կրնար ըլլալ. իւրաքանչիւրս ալ
հաւատքնիս պահելով իրարու ազգ ար-
իւն և եղբայր ենք: » Վարեբաղդաբար,
ասոնց ձայնը խիստ տկար է, և է՛ն բար-
ձրը ձայնովնին միայն Հայոց աշխարհի եր-
գելու կը համարձակին:

— Մեր այս ինչ և այն ինչ քարեկամաց
ազգատոհմներն ո՞ղջ են, և Հայոց կը յա-
րին կար: — Աղջ են, և կը լսեմ որ հիմայ
գրացի են իրարու, և Հայու հետ չեն
տեսնուիր: — Առայժմ, եղբայր Վարկոս,
մնաս բարով, կը տեսնուիք: — Ալ Ապի-
մէնիդէս, երկինք դառնալէս առաջ աս
սպառնալեաց լրումը մեզմէ չարգելուս
նէ, մեղապարտ կ'ըլլաս:

Աղբայր Վարկոսին երկու անգամ եր-
դում տալը՝ որո՞ւ ըլլար նէ կամքը ձեռ-
քէն կը հանէր. և կարծեմ թէ՛ Ապիմէնի-
դէսի ըրածն իր յառաջ չէ ըսածիս բաւական
ապացոյց մըն է աս: « Վարդ մարդու
» քահանայ, մարդ մարդու սատանայ »
կ'ըսէ առածը, որուն ճշմարտութիւնը
մարդ չէ համարձակած ժխտելու: Արա-
նի թէ Ապիմէնիդէսի զայրոյթը վառող
լուցկիքն այսչափն ըլլար միայն: Վայց ա

ուաջ անցնինք, և անգորրամտութեամբ
տեսնանք :

Ապիմէնիգէս տուրներն իրար անցը
նելով գնաց իր հարցուցած տուներուն
մէկը, դուռը զարկաւ : Դուռը կը բաց
ուի, տասը տարու աղջիկ մը գէմը կ'ել
լայ, և իր անձանօթ կերպարանքէն զար
հուրելով ետ ետ կ'երթայ, ու « Ավէք,
և ինչ կ'ուզէք » կ'ըսէ : « Այս Ապիմէնի
գէս եմ, և կու . . . : »

Աղջիկն Ապիմէնիգէսի ձայն առնելուն
զարհուրելի աղաղակ մը կը ձգէ, և « Աե
ռելը տուն եկեր է » պուալով սանգուղքն
'ի վեր կը փախչի : Աղաղակին վրայ անա
կընկալ գուժին պատճառն իմանալու հա
մար եռսուն հոգի վար թափեցան, եռ
սունն ալ առանց փակեղի : Իսկ Ապիմէ
նիգէս կը մտնայ փողոցները փակեղ չի
տեսնալը, կը մտնայ նաեւ իր ազգական
ներն ան բաղմութեան մէջէն հարցունել
գտնալը, և խելքն ու միտքը անոնց գլու
խը չի կեցած փակեղներուն տալով, « Փա
ր կեղ չի կայ, կ'ըսէ . ասոնց ամենն ալ
» Հայու ժամու առջեւէ անցեր, ամե
» նունն ալ փակեղը ժամէն ներս ինկեր,
» ամենն ալ փակեղնուն անցեր ներս
» չեն մտեր, ամենն ալ միշտ աւղղափառ

Դ և միշտ նախանձաւոր մնացեր են . ա .
 Դ մենն ալ օրհնեալ ըլլան . բայց Հայու
 Դ ժամու առ ջեւէն անցնելու ի՞նչ բան
 Դ ունէին . ան ալ դժնդակ հերեախոսու .
 Դ թիւն մը չէ՞ մի Դ :

Ապիմէնիդէս ասանկ ոտքի վրայ երազ
 տեսնելու պարապած տեղը , ամբոխին մէ-
 ջէն քառսուերհինգ տարու մէկը մանկու-
 թեան յիշատակները գլուխը ժողովելով
 կը ճանչնայ անիկայ , և ասանկ դէպքի մը
 մէջ յանկարծահաս զարմանքն ինչ որ ը-
 նել կուտայ նէ անոնց ամենն ալ ընելով ,
 յարուցեալը կ'առնեն վեր կը տանին :

Կայցած տեղերնին մեծ սրահ մըն է .
 ուր վար իջնողներուն եռապատիկը և եր-
 կու ալ վարդապետ տեսնալով ամենն ալ
 նոյնպէս առանց փակեղի , ինքզինքէն ե-
 լած առհասարակ ակումբին կը հարցնէ
 թէ փակեղնին ո՞ր ժամէն ներս ինկեր է :
 Այլերնուն էն եռանդօտը ծիծաղելով
 սատասխան կուտայ թէ , փակեղները ծռ-
 վըն են ինկած . ժամն ինկած ըլլար նէ ,
 կ'ըսէ , հոն չէինք թողուր :

— Հապա ի՞նչ կ'ընէիք , կ'ըսէ , Ապի-
 մէնիդ : — Ի՞նչ պիտի ընէինք . գլուխնիս
 բայ տուն գալու չէի՛նք ա . կը մտնայինք
 կ'առնէինք : — Առանց խղճելու : — Խըղ

Ճեղու բան չիկայ հիմայ, ներկայ վարդա-
 պետները ժամէն ներս մինչեւ տաճարը
 մտան և գլուխնին բաց երկրպագութիւն
 ըրին սեղանին: — Վարդապետները գու-
 ցէ հերեմիկոսի վարդապետ են: — Ամե-
 նեւին ոչ: — Ստոյգ է, վարդապետք, սա-
 ըսուածը: — Այո, ստոյգէն ալ քիչ մը
 աւելի է: — Արեւմտեան ըրիք թէ սրտիւ:
 — Սրտին չի տուածը երեսանց ընելէն ա-
 ւելի վատութիւն չըլլար, մանաւանդ որ
 մենք հոն Պատրիարքին բռնութեամբը չէ-
 ինք գացած: — Յօժարութեամբ գացեր
 էիք ուրեմն: — Յօժարութեամբ և կա-
 մաւ: — Արդեւ կամ որ տէմնիոն ձեզ
 քչեց հոն տարաւ: — Համարէ մարդավա-
 րութիւնը, համարէ ազգային մանկանց
 ուսման իղձը, որն որ կ'ուզես նէ, բայց
 ասոնց մէկն ալ դեւ կամ տէմնիոն չէր,
 սէրն ինքն էր:

— Այլ հիմայ գոնէ զղջացած չէք:
 — Համազգեաց ընկերութեան վրայ բըր-
 դած փոթորիկն եկած չըլլար նէ, քեզի
 ուղիղ պատասխան մը կրնայինք տալ.
 Բայց հիմայ ի՛նչ որ ըսենք նէ մեր ալ հա-
 ւատացածը չէ: — Հաւատքնիս կորաւ չը-
 սէք ատ պատիր պատասխանը տալերնուդ
 տեղը: — Օրհնեալ է Աստուած, թէ որ

1535-2013
 502
 41



խելքերնիս կը հասնի նէ, հաւատքնիս չի
 կորսուեցաւ և սէրը գտնուեցաւ : Մայց
 սէրը ճշմարտութենէն ըլլալով, Համազ
 գեաց ընկերութեան հետ առ ժամս հա
 լածանք կը քաշէ կոր :

Այլիմէնիդէս աս երկրորդ անգամ Հա
 մազգեաց ընկերութեան անունը լսելով,
 կ'ուզէ ինչ ըլլալն իմանալ : Ար հասկնայ
 որ ասիկայ պառակտեալ եղբարց միու
 թեան կեդրոն մըն է եղեր, սիրոյ հնոց մը,
 թշնամութեան սպանդանոց մը, և մէջն
 ըլլալիքը՝ միայն թէ սրտից և ոչ կրօնից
 յաւիտենական զուգութեան դաշնադ
 րութիւն մը, այսինքն սէր : Ա'իմանայ
 նաեւ, որ աս ընկերութիւնը նոյն ինքն
 Հռոմէական Հայերը հիմներ են :

Հոս Այլիմէնիդէսի նախանձուն բողե
 րը ոսկորները ճարճատել սկսան : Փենե
 հէս դարձաւ, բայց աշտէն ձեռքը չէր որ
 ահուժբին հագին փրկէր : Հառաչելով ը
 սաւ թէ « ոհ, պէտքը չէր արդեօք Հա
 յոց բոլորին ալ գլուխը մէկ եղած ըլլալ,
 որ մէկէն սրբաքննութեան կայծակներուն
 վրայ խորովէի ու սատանաներուն նուխ
 րէի » : Աւ ահուժբին վրայ ցասուցեալ աչք
 մը ձգելով, « ձեր ըրածը Քրիստոսի դէմ
 է, » ըսաւ : « Քրիստոս ատելութիւն

կը պատուիրէ ” ըսին : “ Միալեցայ ըսաւ .
” եկեղեցւոյ գլխոյն դէմ է ըրածնիդ .
” Քրիստոս հաւատացելոց երասանակնե-
” ըր անոր ձեռքը տուաւ , ու այլ ինք չի
” խառնուիր ” :

Այլիմէնիդէսի զառանցանքը բազմա-
կանաց ցասումը արծարծել սկսաւ : Աշ-
խոյժ և խոհական երիտասարդին մէկը չա-
րիքը խափանելու համար առայլ անցաւ և
ըսաւ Այլիմէնիդէսի :

“ Մի երկմտիր , դուն ննջած ատենդ
” հողիդ արթուն էր , ու բիշները պակաս
” չի թողուցին քու եռանդէդ : Վտիմիտոզ
” եան հաւերուն պէս սեղանին գլուխը
” թափեցան սիրոյն պատարագը թալլելու
” համար , և սեղանը կործանեցին : Քու
” վախցած կրակներդ , որ եղբայր եղբօր-
” մէ զատել ուղղներուն գլուխը պիտի
” թափին , աւելի սաստիկ արծարծելով ,
” առ ժամս մոխիրին տակը ծածկուած են :
” Ասոր ամենէն աւելի քու կիներդ աշ-
” խատեցան , և առ կ'ըսեմ որ մխիթարիս :
” Մէկերնին Աստաղեաց լեզուաւ գիրք մը
” գրեց , և մերկագլուխ երդուաւ Հայե-
” ըր յաւիտեան նզովելու : Իրեք հոգի
” այլախոհ գանուելով , մէկերնուն գրչո-
” վըն ու անուամբը բողոքեցին առ գրը-

„ ու ածքինն դէմ, և այն բողոքը թերեւս
 „ Սուրբ Խաչի այցելութիւնն ընող վար-
 „ դապետներն ալ մէկտեղ դատասպարտե-
 „ ցին : Այսչափը բաւական չի սեպելով,
 „ Նաբին ձեռագիր տուին աս տարի, որ
 „ օրագիրներուն մէջ հրատարակն ելլալով,
 „ կ'ըսեն թէ Հայերը սրտմտեր են, և
 „ Սասիսն ալ լեզուին պիտի տայ ” :

Աս կէտին սպասաւորը Սասիսի 114
 թիւը տաք տաք բերաւ, որ հրատարա-
 կաւ կարդային : Ապիմէնիդէսի գոյնն ու
 քունը փախաւ. հին գիրքն առաւ գնաց,
 և մէջի ողջ պատառներն իրար կարելով,
 Հայերուն համար թերեւս հարիւր եօ-
 թանասուներհինգերորդ անգամի կրկնու-
 թիւնն ըրաւ : Ասիկայ էր որ թէլէկռաֆօ-
 սի տպարանէն 'ի լոյս ընծայուած տեսանք,
 որուն գիտմանն ու նպատակին վրայօք
 երրորդ հատուածէս սկսեալ քիչ մը լը-
 ջաբար խօսինք պիտի :

Գ.

Ապիմէնիդէս մարդ է, և մարդկային
 իրաւանց բաժանորդ : Իր իրաւունքը կը
 պահանջէ երբոր զրկուի ու իրեն ժրխ-
 տեն : Ապիմէնիդէս պարտաւորութիւն

ալ ունի, և ընդհանուր մարդկու թեան
ունեցածն ալ աս երկու բանն է. Պար-
տաւորութիւն և իրաւունք: Բայց մար-
դիկ երբեմն աս երկուքը իրար կը շփո-
թեն. կամ աւելի ճիշդ ըսեմ, հազիւ
երբեմն իրարմէ կ'որոշեն. պահանջուած
ատեննին կը զրկուինք կոր և կը ժխտեն
կոր կ'ըսեն, հատուցանելը զրկանք համա-
րելով:

Վարդիկ իրենց պարտեաց հատուց-
մանն ասանկ դժկամակ գտնուելով, ի-
րարու իրաւունքն ալ չեն յարդեր: Ա-
մենն ալ կը պահանջեն, մէկն ալ հատու-
ցանել չուզեր. ուստի ամեն տեղ բողոք
կայ, տեղ մը գոհութիւն չի կայ. ամենն
ալ իրար անիրաւ կը կոչեն, և երկիրս սր-
գարներով լի է. վասն զի ամենն ալ ինք-
զինքնին արդար կը կոչեն: Ապիմէնիդէս
ալ հասարակաց ջուրը խմելով, անոնց ախ-
տը ախտացած է: Այլ աւանդ, Ապիմէնի-
դէսի դատաստանը ծանրագոյն պիտի ըլ-
լայ: Վասն զի Ապիմէնիդէս աստուածա-
յին կատարելութիւնը մարդոց սիրան ա-
ռաջնորդելու միջնորդութեան նուիրեալ
ըլլալուն, պարտաւորութեան վրայ պար-
տաւորութիւն մըն ալ առած է. այսինքն
արդար ըլլալ հատուցանելու և պահան-

ջելու մէջ, և իր նմաններն ալ նոյն արդարութեանը առաջնորդել վարդապետութեամբ և օրինակաւ :

Բայց դժբաղդաբար և մեր մեղացն համար՝ Ապիմէնիդէս ասոր ներհակ խիստ խստամբակ է. հնձել կ'ուզէ ինչ որ չէ սերմաներ : Մեզ Հռոմէական ծնողացմէ չէ ծնուցեր, ու մեզմէ Հռոմէականութիւն կը պահանջէ, և ասիկայ իր խիստ արդար իրաւունքը սեպած է : Բայց մենք մարդիկ՝ որ պարտաւորութիւնն չի վաճարելու այնչափ աչալուրջ և այնչափ սովոր ենք, Ապիմէնիդէսի խելքը կը կտրէ որ, պարտաւորութիւնն չեղածը իրեն վճարենք :

Ինք մեզի խորագիտութեամբ հայրապետի և վարդապետի պատգամներ կը բարբառի, որ նեղն իյնանք ու պահանջածը բռնադատութեամբ տանք : Մենք կը ճանչնանք իր նշանակած վարդապետները, և ինք անոնց խօսքերէն փայլուն բիւրեղ (սրբա) յօրինելու համար ուղեղ և շունչ սպառած տեղը, մենք շողշողուն անդամանդը հանած, և Հայոց կաթողիկէին գազաթը արեւուն ճառագայթիցը դէմ կառուցած ենք :

Բայց համարինք թէ իրեն ըրած դի-

տողու թիւններն ու խելամտու թիւնները
ճիշդ և անվրէպ ըլլար, որ ըսել է մեր
գիտութեան ու խղճին ներհակն ըլլար :
Ա՛հ, Ապիմէնիդէս վարդապետ է, բայց
մարդկային սրտին անգէտ է, չկտէ որ
մարդ բռնաբարութեամբ իր ստացուած-
քը իր բարօրութիւնը իր արիւնը և իր
հոգին կուտայ, բայց իր խիղճը ոչ վար-
դապետին կուտայ և ոչ դահճին : Եւ
թէ որ երբեմն իր մարդկային տկարու-
թեամբը պատրողին նենգութենէն միտ-
քը խաբուելով սիրտը տայնէ, պատրան-
քը լուծուածին պէս իր սրտին տէրն է,
յաւիշտակողին ձառքէն իշխանաբար ետ
կ'առնէ : Վարդիկ արդարեւ յաճախ ոչ
խարի կը նմանին, սուլողին ետեւէն կ'եր-
թան, բայց ոչխարի պէս գացած տեղեր-
նին չեն մնար : Են տգէտին ալ գիտու-
թիւնն ու ծանօթութիւնը պակասած տե-
ղը՝ բնական լոյսը քովը պատրաստ է . խա-
բէութիւնը կը ճանչնայ, և ալ անկէ ե-
տեւ զօրութիւն մը չի կայ որ անիկայ
խափանէ :

Ապիմէնիդէս ասոր շօշափելի և մօ-
տաւոր վկայութիւն մը կուզէ : Տետրա-
կին մէջ մեր երեսը զարկած 28 և 29
թուականները թող յիշէ : Ա՛հնետիկի

Վէննայի՝ Տրօքահանուայի և Վիբանանու
լէգէօնները մեր եղբարց ու քերց առջին
ինկան, և վրկուժիւն սուլելով Նսիայի
լեռներն առին տարին, ըսելով թէ՛ հայ-
երը, և չըսելով թէ՛ մեր եղբարքը մեզ
կը հալածեն կոր: Վ.Լ աղէկ, իրենց ըսա-
ծին պէս թող ըլլայ: Վենք էինք որ անոնք
կը զրկէինք ու կը հալածէինք, և իրենք
էին որ անոնք կը տանէին ու կը նախախը-
նամէին կոր: Վէկ խօսքով, մենք անոնց
չար կ'ընէինք, և իրենք կը բարերարէին
կոր: Նպիմէնիդէս թող հիմայ աչքը այն
բազմութեան վրայ պտըտցունէ, և այն
բազմութենէն ՁԾ ին վերջերը իրենց չորս
կարգին ամեն մէկուն ետեւէն բարոյա-
կանաբար քանիկան դերդաստան կամ
քանիկան հոգի կար նէ, նայի որ 45 էն
47 ին մէջը այնչափ մնացէր էր, և անկէ
հիմա ալ այնչափ մնաց, և ասկէ ետեւ
ալ առաջ երթալով այնչափ պիտի մնայ:

Քսանըութնէն քսանըինը իրենց ե-
տեւէն գացողները՝ 45 էն 47 ուր երթա-
լու երես բռնեցին, և մինչեւ ասօրս ալ
ուր կ'երթան կոր: Արպէս զի ամակ ըսեմ,
իրենց հալածչաց կողմը: Նպիմէնիդէս
բանէ տեղեկութիւն չունեցածի պէս
թող չի հարցունէ թէ՛ ուր է գացած տե-

ղերնին, և ուր են գացողները: Աործանեալ կարծած Համադդեաց ընկերութեան ահարկու շարժմանէն խորտակեցաւ իր բաղուկը, և քաշած ցաւուն թառաչներն ու հեծու թիւններն ու յուսահատութեան մռնչիւններն է որ աշխարհք երեք տարիէն 'ի վեր կը լքսէ կոր երեւց վհատեալ տետրակներէն:

Ահաւասիկ Համադդեաց ընկերութիւնն էր ժողովրդեան Ավէնտինը, որ իրենց եղբարցը ժամադրութեան ու միութեանը համար ինքնիշխանաբար կառուցին, և անկէ խիճ մը քաշելու յանդրդնողը լեռանը վէմ մը և ապառաժ մը կ'աւելցնէ իր անմտութեամբը: Արդ՝ ասոնց ո՞վ թելադրեց իրենց արգիլուած պտուղին ասանկ յանկարծակի և համարձակութեամբ ձեռք զարնել: Հայերն ասոնց աս նիւթին վրայ խորհուրդ տուած էին: Ամեն մարդ գիտէ որ, վիճաբանութեան կամ բանակուութեան և նախատակոծութեան առաջին տետրակը Հայոց կողմէն չելար:

Արդեօք զիրենք մեր գիրկէն խլող ասնողները յորդորեցին ասանկ անակնկալ և դժնդակ ձեռնարկութիւն մը ընելու: Ասկայն քանի մը տարու ընէ 'ի վեր Հայ

Ճաղգեաց ընկերու թեան կրած հալածանք
 ներն ընդդէմը կը վկայեն : Արդեօք Ապի-
 մենիդեանց խրախուսանօքն ու ձեռնաը-
 լու թեամբն եղաւ : Ամենեին : Ապիմե-
 նիդէսի դասակիցներէն մէկը՝ որ սիրոյ
 աս սրբազան տաճարին կենդանի քնար
 կրնար ըլլար, իր գերասպանձ բաժինը թո-
 ղուց, և սեմոցն առջին Աերբեր նստե-
 լով, միացելոց ակումբը 52 ին հրասպարա-
 կաւ մերժեց սւրացաւ նզովեց և դատա-
 պարտեց :

Ասանկ երևելի յեղափոխու թեան մը
 պատճառն ստուգելու համար՝ ո՛վ ասկէ
 աւելի բառերու հետ չի խաղանք : Արօ-
 նական ազատութիւննին ասպահովեցաւ
 թէ չէ, ժողովուրդը տեսաւ որ իրենց
 փրկիչները զիրենք մէջերնին բաժանելու
 կը պարասին կոր : Տեսաւ որ այնչափ վիշտ
 և կորուստներ ու օտարութիւններ քա-
 շելէն ետև ալ, իրենց անհաւան և անու-
 ղոք առաջնորդներուն առջին դեռ բա-
 լական ուղղափառ չեն եղեր : Տեսան որ
 հերետիկոսներէն բոլորովին մեկնած ու ու-
 բոշած տեղերնին հերետիկոսութի կայ ե-
 ղեր նոյն իսկ իրենց առաջնորդաց մէջը, որ
 անպատրուակ յայտնելով իրար կը նզովեն
 իրար կը դատապարտեն իրար կը նախա-

տեն ու կը հայհոյեն, և հետեւաբար ամենն ալ ժողովուրդը փրկելու պատճառանօք իրար կը մատնեն կը դատախազեն և կը հալածեն կոր: Տեսան վերջապէս, որ ասոնք հողւոյ պաշտօնէի անուան տակ պատրուակեալ աշխարհասէրներ են, որ աւետարանը գոցելով սատանային զինուորեր, իրար անխնայ կը զարնեն կոր: Աւտի ան ատենէն պատրանքնին լուծաւ, և եղբայրներնին գտնալու տենչը վառեցաւ սիրտերնին:

Ապիմէնիդէս հիմայ կ'ըսէ որ, քանի՞ հռոմէական եկաւ մինչև հիմայ ձեր եկեղեցին հաղորդեցաւ: Աս ալ կ'ըսեմ որ Ապիմէնիդէս իմաստակ է: Անր եղբայրները մեղի հետ միանալու համար կրօնքնին և խիղճերնին մեղի զոհելու պարտաւորած չէին, և մինչև 45 իրենց շարժումն ու շացանէ, դեռ աս ճշմարտութիւնը ուսած չըլլանուն էր. վասն զի իրենց տրուած աւանդութիւնը՝ չէ թէ Հայու հետ սրբաթիւ միանալը, այլ և փակեղը ժամէն ներս մտնալ առնելն ալ կրօնք զոհած ըլլալու երկիւղ էր: Աս մտացածին երկիւղի եղջերուաբաղը ցնորքի պէս ցնդեցաւ գնաց, և իմացան որ, այլ և այլ կրօնք պաշտելով ալ տակաւին իրարու եղբայր

էն , իրարու աղիք էն , և իրարու սիրոյ
գթոյ և գորովոյ ենթակայ են : Ան ասե-
նէն սկսան եղբայրն եղբօրմէն զատ պա-
հելու ջանացող նենգաւորներուն գէմ
օրագրաց մէջ ակն յայտնի բողոքել :

Ինչ և իցէ , Ապիմէնի գէս աչք ունի
նէ կը տեսնայ , և խոստովանելու սիրտ
չունի նէ , աւասիկ ես գոհու թեամբ տես-
նալով բերկրու թեամբ ալ կը յայտնեմ որ ,
խստամբակու թեամբ յափշտակել և գրաւ-
ել ու զածնուն չի հասնելնուն ետե , ար-
դէն յափշտակածնին ալ նուազելով կ'եր-
թայ կոր : Իմ կողմէս ես իրեն կը պատու ի-
րեմ , ու հարկ է նէ կ'ազաչեմ ալ որ , “ Ան
” այժմ գէթ հարեանցի մը կը պատաս-
” խանենք ” ըսածը չ'մոռնալով , ասկէ ե-
տե հարեկացի կերպով թող պատասխանէ ,
և ստէպ և խոշոր հատորներ թող գրէ ,
ու ամէն մէկ հատորին վերջը շահածն ու
կորուսածը աղէկ թող նշանակէ : Ահաւա-
սիկ երկու կողմէն ալ տետրակի կարկուտ
կը տեղայ կոր , և պիտի շարունակէ , տես-
նանք որի՞ն անդն ու արտն է մնաս քա-
շողը :

Արդ աս յաջողուածքները ես ասանկ
տեսնալէս՝ ու մարդկային սրտին քիչ մը
ծանօթու թեամբս ասպագային վրայ վըս-

տան ըլլալէս ետև . Այսիմէնիդէս թող
չսպասէ որ աս գրուածիս մէջ իրեն հեա
կրօնքի վիճարանու թեան մտնամ : Աս հը
րաժարմանս Այսիմէնիդէս պատճառ կար
կրտելու թող չի յոգնի , ես բուն պատ
ճառները ուղիղ և անկեղծ սրտիւ իրեն
կը յայտնեմ :

ն . Այսան դի իր վկայու թեամբը Բայ
Տաճար աշխատութեամբ աշխարհալ աստուածամ
ներ հաղի կը համարչակին եղեր հաստաց խընդ
րոյ մէջ յեռնամոխ ըլլալ . և ես հաղիւ քառ
սուն թել ճերմակ կը տեսնամ կոր մօրու ա
ցրս մէջ : Այսիմէնիդէս իս ալևոր չտես
նալով , կրնայ ըլլար որ Վողիաթի մոլո
րու թեանը մէջ իյնալ , և ես կրօնի խըճ
բիճներու մէջ ընկերիս սիրտը վերաւորե
լէն կը խորչիմ :

բ . Այսիմէնիդէսի բոլոր դաւանակցաց
նպատակը վերէն 'ի վար ցուցըցածիս պէս
մարդու թուոյ և հոգւոյ անուամբ քու
ղած աշխարհային բաներու խնդիրներ
ըլլալուն , իր սրբապղծու թենէն բացէ 'ի
բաց կը հեռանամ , ու յափշտակասիրու
թեան նիւ թոյ մէջ Աստուածային բառե
րը իր ահանջէն անցունելով և իր գրչէն
հանել տալով՝ աստուածայնոց անարգու
թեան պատճառ չեմ ըլլար : Աս որ ան

այլև որեւոց աստուածաբանութիւնը չի
 տեմ, այսինքն Քրիստոս իր աստիճանէն
 վար առնելու և ինձի պէս միտէ ոսկորե
 ու արիւնէ բաղկացեալ մարդ մը տեղը
 դնելու փաստաբանութիւնը չեմ սորված
 և սորվելու կը սոսկամ, առանց վատու
 թեան կրնամ ասպարէզէն հրաժարիլ:
 Վարդկութիւնը ձանձրացած է աս ամ
 բարիչ տրամախօսութիւններէն, կրօն
 քրն ալ կոյր և խուլ խիղճերու դէմ կը
 բողոքէ կոր կրած անպատուութեանը հա
 մար: Անիկոյ թէ որ չեմ կրնար պատ
 ուել տալ նէ, գոնէ նորէն նախատել տա
 լէն կը պարտաւորիմ զդու շանալ:

Է. Վասն զի աս մասին մինչեւ աս օ
 ըրս իմ ազգայիններէս եկեղեցական ու
 աշխարհական անձինք պակաս չէն թու
 ղուցած: Եւ աս օրերս ալ Արշալուսոյ
 Արարատեան տպարանէն նոր ելած 92 է
 ըս գրքոյի մը վրայ հասնելով իս աս տա
 րապարտ աշխատութենէն ղերձուց, և
 ինձի հարկ է յօդուածներուս տպագ
 րութիւնը վրան առնողը ընդունայն ծախ
 քէ խնայել, վասն զի՝

Ը. Այլիմէնիդեանց անխաղնութենէն
 զարմանալով տաղտկացած եմ: Չորս տող
 քան ունին գոց ըրած, որ հաղար անգամ

Հայոց գրիչները եղծելով հերքեցին, ամեն գրուածի և անհերքելի ապացուցութեանց դէմ նոյն հերքեալ տողերը վարնաւորաւ ճանձի պէս կուգան նորէն նորէն ահանջիդ կը բողան, և ամեն տրամաբանութիւն ամեն փաստ և ցուցում պարասը կ'երթայ : Արդարեւ աշխատութիւն չ'աժէր ասանկ յամառութեան դէմ սիրտ հատցունել :

Հինգերորդ և վերջին և գլխաւոր պատճառս աս է որ, ես ոչ Ապիմէնիդէսի հաւատքը պարտաւելու և ոչ իմս պանծացուցանելու յօժարութիւն ունիմ : Ամեն մարդու հաւատքին պարտաւը կամ գովեստը իր քովն է, որ է իր գործքը, և մարդիկ կը տեսնան ու ախորժինն նէ կը դատեն : Դառն կամ քաղցր պտուղը տեսնալէն ետեւ, ծառին բարի կամ չար ըլլալուն վրայ ճառելու պէտք չի կայ :

Ապիմէնիդէսի իր հաւատքին վրայ ունեցած կարծիքը չը սրատուեմալ նէ, չեմ թշնամաներ : Իր հաւատքին ու խղճին մէջ դատաւոր կենալը Աստուծոյ տրուած է, և ինձի արժան է Աստուծոյն Աստուծոյ տալ :

Ասիկայ իմ խոստովանութիւնս է, և աս սկզբանցը վրայ այնչափ գիտակցու-

Թեամբ համադուած եմ որ, իրարու հա-
ւատքի դէմ հինաբար յարձակողներուն
մէկուն ալ հուսակից չեմ: Միայն թէ
ուրիշի հաւատքին ու խղճին մատամբ
դպչելու դպուչացած տեղս, երբոր ու-
րիշ ամբոխ մը կը տեսնամ, որ իմ ազգիս
հաւատքին Քրիստոսէ զատ Տէր մը և
խղճին ալ Աստուծմէ զատ Իշխան մը շաւ-
կըմորած հուգայ տարին տասներկու ա-
միս դուռներնիս ափ կ'առնէ, այն ժա-
մանակը չէ թէ իրենց բուն խղճին հա-
ւատքը, այլ հաւատքին մէջ յօրինած ե-
կամուտ արտաքին մարդկային և Աստ-
ւածընդդէմ հաւատքնին կը քննեմ կը նը-
շաւակեմ և կը հերքեմ, մինչեւ որ իրենց
անամօթու թենէն ձանձրանան ու դուռ-
ներնուս հեռանան:

Եւ սակայն Աստուած իմ, մեր հա-
կառակորդները ոչ ամչցողներէն են և ոչ
ձանձրացողներէն: Ինքզինքնին Քրիստոսի
բանին քարոզող կ'անուանեն, և բնաւ
Քրիստոսի բանին անացած չունին: Օ՛ ի-
րենք չընդունողներուն և խօսքերնին մը-
տիկ չընողներուն քաղքէն ոտուներնուն
փոշին թօթափելով ելլալու հրաման ա-
ռած են. հարիւր յիսուն տարի է որ
հօշիկներնին դլննուս վրայ կը հինցընեն և

մատ մը չեն հեռացած մեզմէ :

Եւ այց ինչ որ է նէ , տարակուսութիւն
կեցած Նպիմէնիդէսի երեսն ՚ի վեր չինաւ
յինք . վիճակը կամ քուէն ձգուած է ,
պէտք է որ անցնինք անգամ մը շորրորդ
յօդուածնուս սահմանը :

Դ.

Արկրի վրայ բաղմաթիւ կրօնքներ կամ
աղանդներ երեւցած են , որ գրեթէ առ
հասարակ իրենց հիմնադիրներուն կամ
հեղինակողներուն անուամբը կը յիշուին :
Աս հաւատքներուն գլուխ կեցող հեղի-
նակները՝ մարդկային ազգին բարօրութիւն
ու բարեկարգութիւնը իրենց նպատակ
ունեցեր են . բայց իսառնազանձ և տգէտ
ամբօխը իրենց ուղածին պէս տանել բե-
րելու համար իրենց կողմէն բաւական զօ-
րութիւն չունենալնուն , գերապոյն զօ-
րութեան մը գործակցութեանը կը դի-
մէին , և երկնաւոր կամ սանդարամետա-
կան աստուածութեան մը նպատակ , այ-
սինքն առասպելով կամ արուեստագործ
հրաշքներով ժողովրդեան սանձը ձեռ-
ուրնին կ'անցընէին :

Աս կրօնքներուն կամ աղանդներուն

հաւատացեալներն ալ պաշտօննին ուղղա-
կի իրենց խոստովանած աստուածնուն ան-
ձամբ առած չըլլալուն, իրենց ու կրօնք-
նուն մէջ տեղը միջնորդ և գլուխ կը ճանչ-
նային և կը ճանչնան այն անձինքը, որ
հաւատոյ լոյսը իրենց հաղորդելու միջոց
և առաջնորդ եղած են: Աստի ժողո-
վուրդներն անոնց ուսուցածներն անոնց
դաստիարակածներն ու անոնց հրահան-
գածներն ըլլալուն, անոնց Վլուխ կամ
Ղաւթնորդ կամ Մարգարէ և Ղապեալ
անուններու հետ կոյր և կատարեալ հը-
նազանդութիւն կ'ընծայէին, և անոնց
պատգամներովը կ'ապրէին և կը մեռնէին:

Ղոնց պատգամները դատելու, անոնց
օրէնքները քննելու և անոնց հրամաննե-
րը ընտրելու կամ մերժելու բաւականու-
թիւն չունենալով, օրինաց և օրէնսդիր-
ներուն սարուկներն էին, և մեքենայի պէս
կը ծառայէին, և օրէնսդիրներն ալ շըն-
չաւոր մեքենաներու շարժիչներ էին մի-
այն: Վանականութիւնն ու հանձարը
մէկուն խաբելու և միւսներուն ալ խաբ-
ուելու միայն ծառայելով, օրէնսդիրները
մինչեւ աստուածոց կենսակցութեան աս-
տիճանը վերցան, և հաւատացեալները
անբանից կարգը իջան: Ասանկ էին և ե-

զան՝ Իսրայէլացւոց ազգէն ու օրէնքս
 դրէն զատ ամենն ալ : Թերեւս ասանկ կը
 պահանջէին օրինաց բնու թիւնները : այ-
 սինքն խրթնու թիւնները անտեղու թիւն-
 ները , և օրէնագրաց ամբարհաւածու թին
 ու սնափառու թիւնը : Իայց ինչ որ է նէ ,
 մարդկային ուղղու թեանը նկրտող սահ-
 մանագրու թեանց արդիւնքը՝ մարդկային
 բանին նուաստու թիւնն է զամ տեսնուե-
 ցաւ ամեն տեղ :

Ար յօժարիմ հիմայ Ասիմէնիդէօի ը-
 սել որ , Քրիստոնեայք ալ կրօնք մը ունե-
 ցան , որ ոչ Սինայի փայլատականց մէջէն
 ծնած է , ոչ Արոտնացւոց դժոխքէն ե-
 լած է , ոչ Վաբինացւոց անտառներէն
 քաղուած է , ոչ ասասլէլեալ ջեհորէն բըղ-
 խած է , ոչ մարդկային մտաց երկունք է ,
 և ոչ աշխարհի իմաստու թեան յօրինուած :

Իր օրինաց մէջը խրթնու թիւն կամ
 անտեղու թիւն բնաւ չունի : Ամեն բառ
 պարզ է յստակ է և բանաւոր : Իր պատ-
 դամներուն մէջ բռնու թիւն դժուարու
 թիւն և ձանձրու թիւն բնաւ չունի : Ա-
 մեն աս աջարկու թիւն կամայական է հեշտ
 է և ախորժեղի : Աս գերազանց առաւել-
 լու թիւններուն վրայ՝ ստունգանու թեան
 համար ալ քարկոծումն գլխատու թիւն

կամ խեղդ ալ չի կայ, և բնաւ մարդկային դատաստան: Մարմինը հոգւոյն ծառայ, և միտքն ու բանականութիւնը հոգւոյն կարողութիւններն ըլլալով, իմացական յանցաւորին դատաստանը հոգեղէն դատաւորի մը ու անյայտ աւուր մը պահած է: Աերջապէս աս կրօնքին ամբողջութիւնը ընծ ճշն է ասլըր, և բէ՝ ճը իոհր:

Մարդիկ անիկայ մարդու ձեռքէ չառին, և ոչ իսկ հրեշտակ գործի կամ միջնորդ եղաւ անոր տուչութեանը: Մարդիկ անիկայ իր բուն հեղինակէն առին, իրենց բնակած երկրէն ոչ վեր ելլալով և ոչ վար իջնալով: Հեղինակն Աստուած է, որ Քրիստոս կոչուեցաւ, և ինք անձամբ մարդոց մէջ գալով, մարդիկ անոր պարգեւած հաւատքն ու օրէնքները իր շրթանց վրայէն ու իր շունչէն ժողովեցին:

Աս երկնաւոր օրէնսդիրը՝ ինչպէս որ իր ամենիմաստութեանը կը վայլէր, առատ էր ու սուցանելու, և ամեն տեղ ամեն աւտեն ամեն վարդապետութիւն ինք ուսուց, և իր հետեւողացը պատուիրեց որ «Մարդ ձեզի վարդապետ չի կոչէք, վասն որն զի՝ ձեր ուսուցիչը մի է: . . .» Ինչ

” քրդինքնիդ ալ ուսուցիչ չանուանէք ,
” վասն զի՝ ձեր ուսուցիչը Քրիստոս է՝ : ”

Եւ ինչպէս իր անհունութեանն ու ան-
սահմանութեանը կը վայլէր , հեղ էր և
մեծամտութեան և անհաւասարութեան
թշնամի : Աստի մարդկային սնափառու-
թիւնը իշխանասիրութիւնը և տիրելու յո-
ժարութիւնը հերքելով , իր հետեւողնե-
րուն հաւասարութիւն տուաւ , և միակ
երկնաւոր Տէր և Իշխան ցուցընելով ըսաւ :
” Իստէք որ ազգաց իշխանները կը տիրեն
” անոնց , և մեծամեծները կ'իշխեն ա-
” նոնց : Չեր մէջն ալ անանկ ըլլալու չէ .
” այլ՝ ձեր մէջէն մեծ ըլլալ ուզողը ձեր
” պաշտօնեան ըլլայ , և առաջին ըլլալ ու-
” զողը ձեր ծառան ըլլայ : Իսկ ամենդ
” ալ եղբայր էք³ , (և) իմ բարեկամնե-
” ըրս էք թէ որ պատուիրածս ընելու ըլ-
” լաք⁴ :

Արդ՝ պարծենալով կրնանք ըսել որ ,
Հայոց ազգը Քրիստոնէական հաւատքին
չնորհը ժառանգած օրէն մինչեւ աս օր
Վարդապետին ուսուցած ճամբէն անխո-
տոր ընթացաւ : Հաւատքին պարգեւա-

1 Մատ . իգ . 8 : 2 Անդ . ի . 25 : 3 Անդ . իգ . 8 :
4 Յօհ . ժե . 14 :

տուն Քրիստոս ինքն ըլլալուն, ուրիշ ուսուցիչ չենք ճանչնար, վասն զի՝ նոյն ինքրն է ուսուցիչ և վարդապետ: Հաւատքը ինք անձամբ և բերնով մարդկան հաղորդելով, իր ու մեր մէջք ուրիշ միջնորդ չենք ճանչնար, վասն զի՝ « Մի է միջնորդ Աստուծոյ և մարդկան մարդն Յիսուս Քրիստոս¹: » Իր հաւատքն ինքնին քարոզելով և եկեղեցին ինքնին կազմելով, իր մէ զատ գլուխ չենք ճանչնար, վասն զի՝ « Նա է գլուխ մարմնոյ եկեղեցւոյ, որ է » սկիզբն, անգրանիկ ՚ի մեռելոյ²: »

Ո՛վ կ'ըլլայ ուրեմն այն մահկանացուն, որ Քրիստոսի հաւատքի երկրին վրայ ինքզինքը գլուխ անուաներ, եղբւր կ'ածէ անօրէնութեամբ և գոռալով հողմ կը հանէ երկեջրս հողմը, և Քրիստոսի հասարակեալս իրեն լինասի ցոցընելով³ եկեղեցին կը դժորդէ և մարդկութիւնը կը տագնապէ:

Ո՛վ կ'ըլլայ այն մարդը, որ ամենայնի և խորոցն Աստուծոյ չննիչ հոգին⁴ հալածելով, մարդկային խղճին իշխանութիւնը բռնաբարել կ'ուզէ, և մարդն իր խղճէն բռնելով, Արուսեկի աթոռին քովը կառու-

¹ Ա. Տիմ. բ. 5: ² Կոր. ա, 18: ³ Եղեջէ. ա. յեղ:
⁴ Ա. Կորն. բ. 10:

ցանկիք խօշական քաղաքին շինու թեանը
ծառայելու կը բռնադատէ :

Ա՛վ կ'ըլլայ այն, որ Քրիստոսիւ միայն
Հօր Աստուծայ երթալու¹ պատրաստե-
լոց ճամբուն կիցերը բռներ, ու առանց
իր անուան դաւանութիւնն ու հոգինին
և ստացուածքնին առնելու, երկնից ու-
ղին առ ջեւնին չի բանար :

Ա՛վ կ'ըլլայ այն, որ իր աշխարհական
սահմանները ընդարձակելու ցանկութիւն
պետութեանց ժողովուրդները իրենց հր-
պատակութեան երդմանէն կը լուծէ, և
երդում բնաւ չընելու խրատեալ մարդի-
կը երդմնազանցութեան կ'ստիպէ :

Ա՛վ կ'ըլլայ այն, որ իր հաճոյից հիւ-
սած հաւատքը դժկամակութեամբ տա-
նողները մոխիր դարձնելու անօրէն խոր-
հուրդը կը յղանայ, և մարդագոհութե-
տեսչութիւններ սահմանելով, Աւրուսա-
յէն մինչև նոր աշխարհ հնոցներ կը բոր-
բորէ, և իր մտաց պատկերին երկրպա-
գութիւն չընող մարդիկը ճանձի չափ չը-
յարդելով ճարձատմամբ կ'երէ կը սո-
չորէ :

Ա՛վ կ'ըլլայ այն, որ իր բռնաւորական

խորհրդոցն անհաւան կեցողները գտնա-
լու համար անգուժ լրտեսներու կամ թէ
լսեմ դաւաճան ճիղվիթներու բանակ կը
սիւսէ երկրի երեսը, և անոնց ձեռքը
մարդկային խղճին ձայնը կը խղդէ, կամ-
քերը կը մեռցունէ, մարդկու թիւնը ձեռ-
վընուն կ'առնէ, և կոյս աղջիկները սառ-
րեցրեայ նկուղներու մէջ կը փրտե-
ցունէ :

Այլ կ'ըլլայ այն, որ « սուր քաշողը սը-
րով պիտի կորնչի » ըսող Վեսրոսին յա-
ջորդու թիւնը տիեզերաց հետ վիճած տե-
ղը, զարդարեալ ջորիին վրայէն Ա՛ւր, կը
պօռայ, ել պատենէր, սրո՛ւն կոպորելո՛ւ համար,
և պատերազմ քարողելով խաչակրու թիւն-
ները կը յարուցանէ. խաչակրու թիւն Մա-
տանիայի մէջ Աւարիտանացւոց դէմ. խա-
չակրու թիւն Հունգարիայի մէջ թա-
թարներուն դէմ. խաչակրու թիւն Անգ-
ղիայի մէջ պարօններուն դէմ. խաչակրու
թիւն Վաղղիոյ մէջ Սուլայի տանը դէմ.
խաչակրու թիւն Վիլօնիայի և Կուռլան-
տիայի մէջ թիւրահաւասաններուն դէմ, և
անդրաւ խաչակրու թիւն Պաղեստինի մէջ
անհաւասաններուն դէմ : Եւ ասանկով,

տիեզերքն իր ձառքովն մի հօտ և մի հո-
վիւ ըլլալու բանդագուշանքն ըրած տե-
ղը, մոլորեալ ոչխարը փնտռելու և ուսը
բառնալու փոխարէն, մոլորեալն ալ գըտ-
եալն ալ իրարու կորստեան կը ձայնէ :

Ո՞վ կ'ըլլայ այն, որ կու իրինեան գան-
ձերն ուռեցունելու համար ոսկեղէն ա-
պաշխարու թիւն կ'ստեղծէ, և մարդիկ
սրբազան կոտորածներուն յօժարեցունե-
լու համար մինչեւ յիսուն և աւելի տար-
ուան ներողութեամբ ապագայ մեղաց
թողութիւն կը վաճառէ :

Ո՞վ կ'ըլլայ այն, որ « իմ թագաւորու-
թիւնս առ աշխարհէս չէ՝ » ըսողին գիր-
քն անյայտ ընելով, հոգեւորական բըռ-
նաւորութիւնը ապահովելու համար երկ-
րաւոր թագաւորութիւն կը հաստատէ,
սուիններով կը պատսպարի, բանակ կը
կազմէ, պատերազմ կը բանայ, հարկ կը
պահանջէ, և հոգեւորէ ու մարմնաւորէ
խառն ցուցանքներ գոյացունելով, ոսկի
և արծաթ ստանալու, կօշիկ և մախաղ
և երկու հանդերձ ունենալու անհրա-
ման՝ մարդոցմէն՝ ելեւմտից և գանձուց
պաշտօնեայ կը շինէ :

Ո՞վ կ'ըլլայ այն, որ տա ամբարշտու-
 թիւններուն ամենն ալ աւետարանին հա-
 կառակ ըլլալը ժողովուրդէն ծածկելու
 համար՝ ուսիկն զոտը գիրք սխալ իր հասկընայ
 ըսելով աւետարանը պատուհասի սպառ-
 նալեօք կարգելու. ու երբ որ վերջապէս
 մարդիկ աւետարանը կը կարդան ու ի-
 րեն Քրիստոսի հակառակորդն ըլլալն ըս-
 տու գելով գլուխ կը քաշեն նէ, երկնա-որ
 հօրը ո՞րքի ըլլալու համար իր խնամիները սիրելու,
 սպեղններուն բարի ընելու, և հալածողներուն
 վրայ աղօթք ընելու՝ տեղը, օրհնելու և ոչ անի-
 ծանելու համար քրճուհի եղած ե՞՞ ըսող հե-
 թանոս քահանայուհիէն ալ չամչնալով,
 ծովը ծեծող Քսերքսէսի սլէս անէծքի և
 նզովքի կը դիմէ. և բթացած անաթե-
 մայներուն չկտրելը տեսնալով, վերջին
 յուսահատութեամբ Վերմանիայի մէջ
 զանգակը կը զարնէ, հաւատքը զէնքի կը
 կանչէ, և բռօթէսթանթներուն հետ ե-
 րեսնամեայ պատերազմին արիւններուն
 մէջ թաթխուելով, թեւն ու թիկունքը
 կոտրտած գլխակոր դուրս կ'ելլայ, աշխար-
 հակալու թիւնները կը կորանցունէ, Վտա-
 լիա կը քաշուի, Հռոմ կ'ամփոփի, և հին

1 Մտ. ե. 44: 2 Պուլտ. Ազիլիքի:

գերեզմաններուն ետին պահուելով, իր մեծութեան կործանումն ու Նորուսեկին անկումը կը նկատէ ու կ'ողբայ :

Թէ որ իրաւցունէ ասանկ հոգի մը ասանկ եկեղեցի մը և ասանկ տեսչութիւն մը կեցած է աշխարհքնէ, ով է այն անհաւատ սրբապիղծը, որ երես կը պատռէ, ու աս արհաւիրքներուն ճնողը Քրիստոսի հաւատքին հաւատարիմ պաշտօնեայ և պատուիրանացը անսխալ գործադիր քարոզելու սուտակասպասութիւնը կ'ընէ :

Ով է այն ճիզվիթ բանակին նենգաւոր լրտեսն ու խաբէքայ նուիրակը, որ մարդկային արեամբ գրուած բոլոր պատմութիւնները կ'ուրանայ, և մարդկութիւնն առ հասարակ խուլ կամ կայր կամ զրպարտիչ համարելով՝ կը պնդէ որ, Քրիստոսի օրէնքները տապալողը Քրիստոսի տանը ընտրեալ տնօրէնն է :

Ով է այն վատթարը, որ իր հոգին Յուդայի արծաթը կշռող կշիւր գնելէն ետեւ, անպատկառ և անամօթ, Հայոց հոգիներն ալ գնելու, և Նաբելոն իրեն գերեկից տանելու արուն քրտինք կը թափէ :

Գնա, Կալիմէնիդ, գնա քունդ քնա-

ցիր . աւետարանն աշխարք համարձակե-
ցաւ : Մարդիկ նորէն խաբելու համար
աշխարք քակելու նորէն շինելու է : Մի
խաբեր ինքզինքդ . ալ ոչ արեւը կը կայնի ,
և ոչ Յորդանան ետ կը դառնայ : Քաղ-
ցերնիդ յագեցունելու և ծարաւնիդ
անցունելու համար՝ ալ մարդու միս ու-
տելիք և արիւն խմելիք չունիք : Քրիստոս
պատրուակ բռնելով , դարերով սատանան
թագաւորեցուցիք . մարդն աւետարա-
նով սատանային ալ ձեզ ալ յաղթեց , և
ասկէ ետեւ Քրիստոս միայն պիտի թա-
գաւորէ :

Գնա , Ապիմէնիդ , գնա քունդ քնա-
ցիր . որչափ յաճիս և կռնչես թր կաշիէն կտցե-
լի՞ շունի՞¹ բնաւ : Հայոց ազգը ձեր դը-
ժոխային մեքենաներուն յաջողութեամբ
բանած ատենն ալ չբռնուեցաւ : Հիմայ
որ դարաններնիդ փլեր , թակարդներնիդ
փշրեր , ու ո՞վ և ի՞նչ հոգիէ ըլլանիդ
ճանցուեր է , ձեր վրայ վարձկան լրտե-
սէ մը ու մատնիչէ մը աւելի վստահու-
թիւն ընելիք չունի :

Գնա , Ապիմէնիդ , գնա քունդ գնա-
ցիր . Ատտիկանի պալատականները պա-

րարելու համար չորս միլիոն Հայն ալ
 բաւական չէ մի հօսք ընելու . Վերամանիայի
 Օվեցցէրի Հօլանտայի Անգղիայի Սկով-
 տիայի Շվեյտի Վաղղիայի և Ամերիկայի
 մէջ հարիւր միլիոններով փախուցած ոչ-
 խարներնիդ ժողովելու նայեցէք : Մի հօս
 և մի հովիւ ընելու յոյսը թնդանօթնե-
 րով և սուիններով պատասպարեալ եկեղե-
 ցիէն վերցած է : Նախնական եկեղեցւոյն
 սիրով ժողովածները սրով ցրուեցիք դուք .
 և հազար երեք հարիւր տարիէն ՚ի վեր աս
 օրուան օրս երկրի 739 միլիոն բնակիչներէն
 ունեցածնիդ տասանորդ անգամ չէք կրը-
 նար համարիլ : Պետրոսի նաւակը նաւա-
 բեկու թենէ նաւաբեկու թիւն տարիք ,
 և խարդախու թեանց ու մուրու թեանց
 ապառաժներուն մէջ տեղերը փշրելու դ
 ետև , տիեղերքը կառավարել կը կարծէք
 կոր :

Վնա , Ասլիմէնիդ , գնա քունդ քնա-
 ցիր . Հայոց վրայէն լեղուդ քաշել սոր-
 ված ըլլայիր նէ , ոչ քու խօսքդ կ'ընէի և
 ոչ մուրու թիւննիդ կը քննէի : Ատեն մը
 կար , որ չէիր կրնար շղթայներդ համար-
 ձակ շունչեցունելով պարտիլ , և ես քեզ
 խափանողները քեզմէ աւելի չէի դոված :
 Հիմայ որ աղաւտու թիւնդ ստացած ես ,

գնա խաղաղութեամբ վայելէ, շղթայներ
 բուռ հետ ուղածիդ չափ խաղայ, և գե-
 բութեան նախատինքդ ծածկելով, ջանա
 Հայոց ազգը ձանձրացուներէ ետ կե-
 նալու :

Վնա, ձեր տանը մէջ բորբոքած հրը
 դեհը մարելու : Վնա, ձեր մէջէն հերե-
 տիկոսն ու ուղղափառն որոշելու աշխա-
 տէ : Վնա, արդէն յեւրեւէր եղածը ջը
 կորանցուներու հսկէ : Վնա, Հռոմայ գա-
 հէն վերապատուեալ նախագահ արքե-
 պիսկոպոսիդ առջին քու կեղակարծ ուղ-
 ղափառութիւնդ հաստատելու միտք յագ-
 նեցուր : Վնա, Փրօփականտայի Աէննայի
 և Վիբանանի միաբանութեանց քու նա-
 խանձայոյդ և աններող ուղղափառ ըլլա-
 լըդ ձանջու, և Հայոց ալ անտարբեր և
 անխափր ըլլալըդ հաւատացուր : Վնա,
 երկու կողմին ալ յարափոփոխ և կերպա-
 բանափոխ Արտթէս չըլլալդ, ու ամեն
 մէկուն առջին իրենց հաճոյ պատկերն
 առնող կեղծաւոր չըլլալդ ցուցու : Վնա,
 վերջապէս, քու միաբանութեանդ մէջ
 քանի մը ստոյգ ազգասիրաց ներքին ձայ-
 ները հեղձուցանելու փոյթ ըրէ որ չա-
 ըիքը մէջերնիդ չ'ձարակի :

Վնա, աս մարդասիրական խորհուրդ-

ներուս վրայ մտադիր մտածէ, մինչև որ
ես հինգերորդ և վերջին յօդուածով մը
խօսելիքներս լինցունեմ:

Ե .

Հաւատքին ու նիւթական շահուն
խնդիրներն իրար կցորդելով մարդոց հետ
վէճ յուզողը, մարդոց մէջ բանական եր-
կակենցադ մը համարելու է, որ ըսել է ոչ
մէկը ճշգրտաբար և ոչ միւսը: Արկակեն-
ցադ մը, որ բնութեան արտադրութիւ-
նը չըլլալով, իր օտար կենցաղավարու-
թեանը վրայ երկակենցադ կենդանեաց
չբռնեղութենէն զուրկ է: Ասան զի՛ բա-
նականութեան հզօր առաւելութիւնն ի-
րեն զօրաւիգն ունենալով, կամ բոլորովին
Աստուծոյ յարկը կամ բոլորովին Ասան-
նային տաղաւարը բնակելու ինքնիշխա-
նութիւնն ունի:

Ճշգրտիւ, Ապիմէնիդէս աս ինքնիշ-
խանութեան ունենալէն զատ, 1540 թը-
ւականէն ՚ի վեր ալ Աօսյօրացւոյն արա-
րածները իրեն օրինակ և խրախոյս ունե-
նալով, իր անձնիշխանութիւնը աս կեանքն
ընտրեց է: Հարցուր ճիղվիթի մը թէ
ո՞ւր կը բնակի, անշուշտ յԱստուած կը բնա-

Կ՛ճ կ'ըսէ : Այլ իրաւցնէ , բոլոր մարդկան
 և նոյն իսկ զինքը դաստիարակող մեծաւո-
 ըին առ ջին ալ՝ հոն կը բնակի : Վայց իրեն
 անպարծ և խոնարհ վկայութեանը մտիկ
 ը' ելով անիկայ Աստուած բնակելու զըր-
 պարտութեան տակ ձգել արժան չէ ,
 վասն զի՝ անիկայ հոգւով հոն կը բնակի ,
 ուր իշխանութիւն կայ տեսչութիւն կայ
 բռնութիւն կայ նենգութիւն և դաւադ-
 րութիւն կայ , ուր սուր կը շողայ կամ
 կրակ կը վառի , ուր արծաթ կը փայլի
 կամ ոսկի կը փայլատակէ . վերջապէս ,
 ուր որ մարդկութիւնը ընկրկելու կամ
 նուաստացունելու և ծառայեցունելու
 ճիգն ու յարատե և կանոնաւոր աշխա-
 տութիւն կայ . և ասոնց մէկն ալ Աստ-
 ուած չըլլալով , ճիզվիթին բնակութիւնն
 ուր ըլլալը յայտնի է . այսինքն Աստուծմէ
 անդին ամեն տեղ :

Ապիմէնիդէս ալ իր նախնանձաւոր հոգ-
 ւովն անոնց հետամուտը փոքրաւորը ու
 պատկերն ըլլալով , իր գիշեր ցորեկի աշ-
 խատութիւններովը յաջողեր է ճիզվի-
 թութիւնը հայերէն բարբառելու անանկ
 կատարելութեամբ , որ Վօայօլային իր
 անդրանիկներէն չի պիտի խորէ և չի պի-
 տի որոշէ : Աւշ գնելու է Ապիմէնիդէսի

խօսածներուն, որ արդարեւ զուարճու-
թիւն և խելք կը մատակարարէ հետա-
քրնին եղողներուն :

Ախիթարեանները տասներորդ և քսա-
ներորդ անգամ ինքզինքնին վաճառելով,
աս տարի քահանայապետին նոր մուրհակ
մը կնքեր տուեր են : Նոր համար մարդ
բան չի կրնար բտել. ինքզինքնուն տէր
են, որո՞ւ ուզեն կը ծախուին : Աիայն թէ
իրենց սակարկութեանը մէջ շահաւոր
վաճառքին վրայ յաւելուած մըն ալ ընե-
լով, խոստացեր են Հայերն ալ հետերնին
գնողին շտեմարանը տանիլ զետեղել : Իմ
նկատմամբս աս ալ որչափ որ իրենց հա-
մար ամօթալի բան մըն է նէ, մեզի համար
այնչափ դժուարելու կամ իրար անցնելու
բան չէ. ինչու որ, իրենց գերեվարին
հաճոյ ըլլալու համար՝ ուզեղնին խանգա-
րած մէկ ատենը խոստմունք մըն է ըրեր
են, որուն կատարումն իրենց ձառքը չըլլա-
լուն, վերջն իրենք պիտի խայտառակին,
վասն զի իրենց գնողը օր մը պիտի հար-
ցունէ թէ ո՞ւր է խոստացած Հայերնիդ :

Աղէկ, բայց ի՞նչ ընես. աս ըրած դա-
տումս ամենուն գլուխը դնելու հնար չի
կայ. նաև խորհողն որ ես եմ, իմ գլուխս
անգամ տեղ չեմ գտնար դնելու : Ասկար-

կուրի կարգ ալով, ազգայինք մեծ ու պզտիկ
զայրացեր են. մանաւանդ անոնք, որ 1849 ի
բազմավէպին սեպտեմբերի և հոկտեմբե-
րի յօդուածներուն իրաւունք տալու և
իրաւամբ թմբուկ կոչելու համար լեզու
սորվեր, ու Ամերիկացի գորովասիրտ Վա-
տամ Վթօլի գերեաց ճակատագիրն ստու-
րագրող գրգռիչ պատմութիւնը կարգա-
ցեր են, Վիսիթարեանց մեղի գերեվար
մը պատրաստելը լսելով, գլուխնին բար-
կուծեան մրրիկներէն յամիշտակուեր է :
Արիտասարգու թեան արիւնք կրակոտ ըլ-
լալով, Վասիսի գրիչներէն մէկն ալ ըսեր
է որ, « Պապը ոչ միայն Քրիստոսի Ակե-
» ղեցւոյն գլուխ, այլ և ոչ ժամկոչ և ոչ
» դձնասպան կը ճանչնանք : »

Արդարեւ Վասիսի հիմակուան գրիչ
ներուն ես ջերմ կուսակից եմ, և ազգին
նախանձովը գրածներնին միշտ կը գովեմ.
աս գրուածին մէջ ալ նոյնպէս նախանձա-
ւորութիւններնուն հաւնած եմ, բայց ըզ-
գացմանցը բաժանորդ չեմ, և բացէ ՚ի
բաց զատուած եմ. որովհետեւ ամենե-
ւին քրիստոնէական չէ : Վասն զի թէ որ
անիկայ Հայոց եկեղեցւոյն մէջ բան մը
ընելը իմ ձեռքս ըլլայ նէ, ժամկոչ և դրո-
նասպան չեմ ըներ. չէ թէ արհամարհու-

Թեան համար, այլ վասն զի անոնք իրենց պաշտօնիւք տաճարէն դուրս կը գտնուին միշտ: Այս անիկայ Աւագ Սարկաւագ կ'ընեմ, որ երգեցմանց և արարողութեանց և աստուածային պաշտօնին անձամբ ամենամերձ գտնուելով, հայկական դաւանութեան երկրպագութեան պատարագին և սպասաւորութեան պարզութիւնը անարատութիւնը սրբութիւնը և անխառնութիւնը տեսնալով զեղջի և դարձի գայորով միսիթարեանց մեզ ստակով վաճառած տեղը, մենք անոնք Հովուոյն Սրբոյ շնորհիւք գնած և փրկած կ'ըլլանք: Իայց ինչպէս ըսինք, բեր խելք որ աս տեղուանքըս հասնի:

Այլիմէնիդէս Մատիտի աս բառերը տեսնելով, Իսաբին ծանր նախատինք է համարեր. իբրեւ թէ իրենց մեզ վաճառելու սակարկութիւնը մեզի նախատինք չէ: Արամանք է աս. կրօնքը ճիզվիթի կրօնք է, անամօթ երեսին արժանաւոր ասպտակը կերած տեղը միւսը չի դարձունելէն դատ, քեզի զարկած ատենն ալ բողոքելուդ այսահար կ'ըլլայ: Իսկ «Մեր գիւղ» զացի պարզ համեստ և բարեպաշտ քահանան Հռովի Պապէն . . . բարձր և պատուական է մեզի» բառերուն վրայ,

Հոռ մներուն ըսածին պէս բողոքովին Արի-
ոս կտրեր է . վասն զի իր կրօնքը երկրա-
ւոր մեծութեան կրօնք է : Չիյտէ և չու-
զեր հաւատալ որ , ժամկոչը դռնապանը
քահանան Վաբը և կաթուղիկոսը բողոքն
ալ հաւատար են Վրիստոսի առջին , և
երկնից արքայո-թեան Տէջ Գոչրիչը (Յօհաննէս Ա՛ւ-
կերբիչէն Տէժ է : Իրեն համար՝ ծիրանի հագ-
նողէն մեծ չի կայ ոչ յերկինս և ոչ յերկրի :

Աւստի Ա՛ստիսի բառերը լրբո-թի-ն յան-
դըգնո-թի-ն արգիսո-թի-ն և անհաղաքավարո-թի-ն
ցուցընելով կ'սկսի ճիղվիթութեան հը-
րահանգները գործի դնել : Այլ վայրկեան
մը Ա՛ստիսի գրիչները մէկդի ձգելով ազգա-
պետներուն առդայ կը ցուցընէ ըսելով
թէ , « այնպիսի լրագրոյ մէջ , (ինք շտա-
ն պէն ու սրտին դողէն առ ստորակէտը
ն մոռցած է .) որուն պատասխանատու-
ն ութիւնը կը կարծենք որ պատրիարքա-
ն ըանին եկեղեցական և աշխարհական յոյզովնե-
րը վրանին առած են : » Մտածներէն
ուղղակի սա կը հասկցուի որ , յոյզովները
պատասխանատու ութիւն առած են՝ Ա՛ր-
խիթարեանց մեզ Վաբին խոստանալը ազ-
գային ականջներուն յանձնառութեամբ
և երկիւղածութեամբ մտիկ ընել տալու ,
և անոնց բարբանջմունքները լռութեամբ

մարտելու համար ալ ազգային օրագրաց
լեզուն կտրելու : Օրցերնին երկու սասկ
եւել ունեցող հայերուն կ'աղաչեմ որ ու
ղորմած ըլլան , և Ապիմէնիդէսի բնակած
դարմանոցն իմանալով՝ շաբաթը կենդի
նար մը վրացի կոճ կամ եղբորոս (գա
րա չէօիլէմէ) խրկեն , խեր է : Յնորեալը
չկտէ որ , Դողովները պատասխանատու
ութիւն առած են՝ Հայոց ճնուներէրը
ճիզվիթներուն գելոցներէն ու պրկոցնե
րէն պատսպարելու : Աս ճիզվիթութիւ
նը ինչպէս որ կ'երեւայ պարապն ելած է :

Իայց Ապիմէնիդէս առաջ երթալով
մեքենաներուն շարժումը կը պնդէ , և ա
հաւորագոյն նենգութեան ու մատնու
թեան ձեռք կը զարնէ : Վիտէ որ իբրեւ
քահանայապետ իր գիւցազունը որչափ
մեծցրնէ աչուրներնուս զարնելիք չունի ,
ուստի թագաւորութիւնն առջեւնիս գը
նելով Հայոց ազգին աչքին որդը կտրե
լու կը ջանայ ըսելով թէ , « որուն վրայի
» քահանայապետական և թագաւորական
» աստիճանին մեծութիւնը նոյն իսկ Օս
» մանեան կայսերութիւնը կը ճանչնայ : »
Ապիմէնիդէս Վասիտ գրիչը իմաստակ կո
չած է իւրը մերժելուն համար . հոս
ինք ալ քահանայապետութիւնն ու Օս

մանեան կայսերութիւնը միասնաբանե-
լով, իմաստակութեան կոթող մը կ'ըլլայ՝
առանց ամենեւին փայթ ընելու. վասն զի՝
ըրաճը ճիղվիթութիւն է. դատը վաստը
կելու համար հակասութիւն չի կայ որ չը-
նէ, և խայտառակութիւն չի կայ որ յան-
ձըն չառնէ :

Բայց ինչ և իցէ. խեղճ Ապիմէնիդէս
իմաստակութեան զիջանելով ալ մեզ վախ-
ցունելու յոյսէն վրիպեր է : Ասան զի
մենք Բաբը մեր Արայսեր հետ թագաւոր
կը ճանչնանք, և ի՞նչ խաղաւորութիւնս սս աշ-
խարհս չէ ըսողին հետ յարաբերութիւն
չունենալը անով կ'ապացուցանենք : Իսկ
իբրև քահանայապետ, յայտնի է որ Օս-
մանեան կայսերութիւնը անիկայ իր դե-
նին գլուխ չճանչնար, և մեզի ալ կա-
տարեալ ազատութիւն կուտայ անիկայ
մեր Ակեղեցւոյն գլուխ չճանչնալու. և
թէ որ անոր քահանայապետութեանը
նկատմամբ եղած բանակառութեան հե-
ղինակները յանդ իմանելու ըլլայ նէ, կար-
ճեմ անդադար կարկաչելով առաջարկող-
ները այն յանդ իմանուէր կը հանդիպին և
ոչ մերժողները : Աս ճիղվիթութիւնն ալ
պարապը դնայ. հիմա յստակ գրոգորտու-
թեան միջոցը կը մնայ ձեռք առնելու :

Արտէ թէ, « այսպիսի վատ և ամբար-
 » ը ը ի շատ գրիչներու համար ձակու թիւն տրը-
 » ու ելով, անուանարկ ըրին զազգը բոլոր
 » աշխարքի առջև : » Ասոր խնդարս եկաւ,
 և թէ որ հեռու չըլլայի նէ կենդինար մը
 եղբորս ալ ես ընծայ կ'ընէի : Այլ արդա-
 բեւ խիստ զուարճալի է լսել վատին ու-
 ը ի շք վատ անուանելը :

Վասոր դուք էք Ապիմէնիդէս, որ ան-
 տարբերու թիւնը մինչև եկեղեցիներնուս
 ներսը գալու և երկրպագելու հասցու-
 նելուդ ետև, Հասունեան գերասայ-
 ծառին պակուցիչ ձայնէն ահաբեկ ըլլա-
 լով անանկ բուրդու բապուճ փախաք որ,
 փակեղնիդ գաւիթը իյնար նէ իրաւցնէ
 չի պիտի կրնայիք դառնալ առնելու, և
 Հռոմայ քահանայապետին գաւիթը չը
 հասած, գիրքով և բողոքոյ ստորագրու-
 թիւններով Հայերն երկու անգամ ու-
 ը րացար :

Վասոր դուք էք, որ հարիւրներով
 Նաղմավէպի ձիրք ընողներուն միտքերը
 քնացունելու համար մէջը վերս պարել-
 առ աջագրու թիւններ կ'ընէք, ու ետքը
 իրարմէ վախերնուդ՝ Ախիթար արքայի
 տարեդարձն եկածին պէս (Թրեանց Հ.
 Արախայէլի ճառ մը դուքս տալով Պետրո-

սի ըսածը կ'ընէք :

Իսկ ազգը անուանարկ ընելու մասին ,
 ասկէ ետեւ Ապիստէնիդէս ըսենք նէ մար-
 դիկ աներէս թող հասկընան , և դուն ալ
 ինքզինքդ իմացիր : Անիղլիթ ըլլալդ սա-
 տանան չգիտնար նէ , ան ալ պիտի զար-
 մանար : Սուքիաս Սոմալի Հայոց գլխա-
 կանու թեան պատմութիւնը մե՞նք շա-
 րագրեցինք իտալերէն ու տպեցինք : Աղի-
 շէի պատմութիւնը՝ (որուն խեղճ թարգ-
 մանիչը գաւաթ մը գինիյով և աման մը
 չոր ապուրով (փիլավ) ասդիյի տունը ուղ-
 ղափառները կը պարսաւէ , անդիյի տունն
 ալ թուքածը լղել կուտան իրեն ,) մե՞նք
 գաղղիերէն թարգմանեցինք ու չըլլալի
 ծանօթութիւններովը տպեցինք : Հայոց
 ձեռքէն իրաւամբ ազատութիւն փնտռե-
 լու համար Աւրոպա շրջմովիկ պըտըտող-
 ներնուդ մէկուն Հայոց գէմ գրած դժո-
 խային տետրակը Փարիզ մե՞նք տպել տը-
 վինք : Հայոց ազգին անունը կոտորելու
 համար ձեր միաբանութենէն աւելի թե-
 ւերը սօթտող եղան՞ծ է աշխարհ :

Թէ որ Աերսէս Պալիեմընէր և Սիֆօն կար-
 նեցիներ լին պակաս՝ ազգերնոսս Ռջէն նէ , ուլ

է անոնք անձամբ անպակաս պահողները :
 Աերսէս Պալիենցն ու Սիմէօն Կարնեցի՛ն
 էին Տաբին աս տարուան տուած մուր-
 հակնիդ ստորագրողները : Թէ որ ազգ թը
 և հահանայապետներն էն թը ճապնողները, աս
 քահանայապետներուն Աննան չէ նէ Կա-
 յիափան, Կայիափան չէ նէ Աննան միշտ
 ձեր միաբանութենէն է :

Աս անուրանալի ազայոյցները աշխարք
 կենալէն ետե, յայտնի կ'երևայ որ դուք
 իրաւախոս ըլլալէք մարդիկ չէք. մեզի
 մնասակար չըլլալու համար հաւատքնիս
 և իրաւունքնիս կ'ուղէք, և խենթ պա-
 հանջմունքներնուդ անհնարութիւնը տես-
 նալով կատարեալ անամօթութեան կը
 զարնէք. ընկերութեան և ակումբներու
 մէջ անտարբերութիւն խոստանալնիդ բա-
 նի տեղ չդնելով հրապարակաւ մեզ Տա-
 բին կ'ուխտէք, և անարժան և կեղծաւոր
 և ամօթալի գնացքնիդ նշաւակողներուն
 դէմ սրտմտելով, գրիչնուն կարկիլը կ'ու-
 ղէք :

Ար հաւատան, որ Հայոց դէմ ճո ըն-
 չող մամուլներնիդ Հայերը բարեպաշ-
 տութեան մեղեդիներ համարին, և իրենց
 գրիչները ամբարիշտ դատելով լռեցու-
 նեն : « Սխիթարեանց ազգին վրայ ցուցը

Գ ցած ազգասիրու թեան եռանդը Գ ասոնք
 չե՞ն . այսինքն ազգին վրայ չարախօսել ,
 ու բերանը բանալ չի տալու աշխատիլ .
 Կւրոպայի մէջ գիրքերով և օրագիրներով
 թէպէտ և պարապ տեղը անոր անուէն
 աւրելու անքուէն աշխատիլ , ու իրեն հա-
 յերէն գրուած պաշտպանութիւնները ա-
 նիրաւութիւն քարոզել :

Բսէ՛ , Կպիմէնիդէս , աս բաները բո-
 լոր տանեաց վրայ հռչակուելէն ետեւ՝ ա-
 ռանց ճիղվիթութեան ինտո՞ր կրնայ մարդ
 Հայերուն վրայ Մխիթարեանց դէմ չի
 համբերելու՝ աստիճան-իւն գանգատ ընել :
 Չի ծուլանանք համառօտ քննութիւն մը
 ընել հոս սա կարծեցեալ երախտեացն , ու
 Հայերուն յանկարծ ձեզի ապերախտ գրա-
 նուելով ձեզ ատելուն և պատճառներուն
 վրայ :

Ի՞նչ է արդեօք երախտիքնիդ . և Հայոց
 բերանները ձեր տմարդութեանցը դէմ
 մինչեւ վերջը կարած պահելու չափ մեծ
 բաներ են : Մխիթարեանց մէկ քանի հան-
 ճարները Հայոց հին լեզուն մշակեր են :
 Հաս աղէկ են ըրեր : Բայց Հայոց լեզուն
 Հայոց ձեռագիրներուն օգնութեամբը
 մշակած ըլլալնուդ , ձեր հանճարին արար-
 չութիւնը չէ : Հայոց ձեռագիրներն ալ

Հայոց վանքերէն ու գրանոցներէն հայ-
 թայթելութիւնիդ, ձեր բաղձանաց լրմանը
 համար ձեզի պարտք է Հայոց վանքերուն
 ու գրանոցներուն երախտապարտ ճանչ-
 նալ ինքզինքնիդ : Բայց դուք աս ընէք
 կամ չընէք, որովհետեւ լեզուն կենդանա-
 ցընելու համար ձեր աշխատաւ որները ա-
 խորժակաւ ձեռագիրները մաղելու քրտինք
 թափեր են, ազգին մէջէն գրաբառի ա-
 խորժակ ունեցողները քրտինքներնուն ա-
 մեն մէկ կայլակին բիւր շնորհակալու թիւն
 կ'ընեն :

Կանք որ աս լեզուով քանի մը պիտա-
 նեգոյն գրքեր թարգմաներ են ձեր աջ-
 ղագոյնները, այսինքն մէկ խաւարէն հա-
 ներ մէկալ խաւարը թաղեր են, կամ թէ
 ըսեմ, ճրագը մէկ գրուանին տակէն հա-
 ներ մէկ ուրիշ գրուանի մը տակ են գը-
 ըրեր : Ասոր համար չորս հոգի միայն հաս-
 կընալուն շնորհակալ կրնան ըլլալ, իսկ ըն-
 թերցողաց բազմութիւնը աս շնորհներ-
 նուդ անզգայ մնալու կը պարտաւորի :

Աշխարհաբառ հրատարակած գիրքեր-
 նիդ ալ՝ գոնէ գրաբառու թեան պարճան-
 քը ձեզի չի տալէն դատ, ազգը առաջ տա-
 նելու բաներ ըլլալէն այնչափ հեռու են,
 որչափ որ Բաբը Հայոց կաթուղիկասէն :

Բայց ձեռու ընուդ եկածը այնչափ ըլլա-
լով, անոր ալ շնորհակալ ենք, առ ժամս
երախտապարտութեան մեծ բան մը չի
կայ:

Բայց արդար ըլլանք դատաստաննուս
մէջը: Աս պիտանի կամ անկարեւոր գրքե-
րուն ամենամեծ մասին տպագրութեան
արդիւնքը Հայ բարերարներ հատուցած
են, անանկ որ այն գրքերը ձրի տալու տը-
րամագրութեան մէջ էք ազգասէր էք նէ,
և թէ որ ելած գինովը վաճառելու ըլլաք
նէ, դրամագլուխները ձեր վատակոցը
բաւական հատուցմունք կ'ըլլան: Արան
չա՛հ ալ ընել կ'ուզէք, ան ալ ամօթ չի
համարինք: Ախշեցէք հիմայ գիրքերնուդ
հրեղէն գիները, յիշեցէք աղքատ բանա-
ռէրներուն երակներէն քակած ստակներ-
նուդ չափը, նայեցէք որ ազգին բարերար-
ներուն դիտմանցը դէմ ըրած անգութ ա-
պերախտութիւններնուդ կշիռ կուգայ
Հայոցմէ ընկալած կարծեալ ապերախտու-
թիւններնիդ:

Այսու ամենայնիւ, աս փշալից ցան-
կերնուդ մէջէն քանի մը հոգւոյ բուսու-
ցած վարդերը ախորժով հոտուրտացող-
ներ սրակաս չեն:

Տեսնանք հիմայ Հայոց ձեզմէ յանկարծ

երես դարձնելուն, կամ քու լեզուովդ
խօսելով, ձեզի դէմ ապերախտ գտնուե-
լուն պատճառը :

Դուն կը համարիս կոր որ ձեր Քրիստո-
սի Բանին քարոզող ըլլալն ու ճշմարտութիւնը Բա-
ցայացի քարոզելն է մեզ զայրացունողն ու ա-
պերախտ ընողը : Ատիկայ պատճառ մըն է
որ, իմաստակու թիւնդ ապացուցանելու
համար երէկ ասօր ծներ է, և մինչեւ հի-
մայ աշխարհքիս վրայ կեցած չէր. վասն զի՝
դուք բնաւ Քրիստոսի բանին քարոզող
չէք. շրթունքնիդ Վաքի անունէն վայր-
կեան մը պարապ կեցած չէ որ, Քրիստո-
սի անունը բերաննիդ առնէք, եւ ինչպէս
վերէն 'ի վար գրածներէս ամեն մարդ բաց
'ի քեզնէ կը հասկընայ, Քրիստոսի անունը
մէկ դի ձգելով Վաքին անունը միայն չա-
րաչահու թեամբ մեզի քարոզելնիդ, և էն
վերջն ալ մեզ անոր վաճառելու ձեռա-
գիրնիդ է որ մեզ ձեզմէ սառոյցի պէս
պաղեցուց :

1852 թուին Արսէն Վագրատու-
նի վարդապետին հրատարակած գիրքո-
վը մեզ հրապարակաւ և երդմամբ ու-
րացաւք թէ չէ :

Փարիզ գտնուող վարդապետաց ՚.
Վաքրիէլ վարդապետին բերնովը ան գրո-

քին դէմ վանքին բովանդակու թիւնը չըբ-
մեղացունող և գիրքը դատապարտող
թուղթը միաբանու թեամբ հերքեցիք թէ
չէ : Ա երջասկէս՝ աս տարի ալ մեղ Մաբին
վաճառելու համար իրեն դաշանց գիր
տուիք թէ չէ :

Աւրեմն այդչափ կուրու թիւն կամ յա-
մառու թիւն պէտքը չէ, որ աս յայանի
պատճառները չի տեսնալով կամ չի տես-
նալու զարնելով, ձեզմէն երես դարձու-
նելուս համար երթաս վհին խաւարնե-
րուն մէջ աներեւոյթ և անդոյ պատճառ-
ներ փնտռես :

Մհա ձեզմէն կտրուելուս պատճա-
ւը. թէ որ ձեզմէ արդէն տաղտկացած
ըլլալնուս մէկ պատճառն ալ իմանալ
կուղես նէ, Մաբին անունէն ետեւ Ար-
խիթար արքային անուան չըսեմ քարո-
ղու թիւնը, այլ անչնորքու թեամբ ճա-
կատնիս զարնելիդ է, որ ահա կը բա-
ցատրեմ :

Արխիթար արքան ժամանակաւ նե-
ղու թիւն կրեր է : Հաստ ցաւալի բան :
Մայց թէ որ ան անձին վրայօք տուած
պատմու թիւններնիդ ստոյգ է նէ, ան
մարդը իր կենդանու թեան ատենը ամեն
բան ներեր ամեն բան մոռցեր է : Հիմա

ձեզ անոր աշակերտելոցդ ինչ հարկ կայ
 տարուէ տարի հարիւր յիսուս տարուան
 անցած բանը թակի պէս անդադար գըլ-
 խուսուս առնել զարնել: Ասանկով դուք
 մեզի միւս երեք միաբանու թիւններնուդ
 աւելի անտանելի կ'ըլլաք կոր: Ասան զի
 անոնք գոնէ միայն Վաբերնին ունին մեզ
 անհանգիստ ընելու նիւթ, իսկ դուք Վա-
 բին հետ Միսիթար արքայ մըն ալ առեր
 վրանիս կուգաք, և պաշտած մարդեր-
 նուդ յիշատակը տաղտկալի կ'ընէք:

Ազգայիններէն ձեզի եղածը բնաւ մեր
 ազգային լրութեան կամօքն ու հաճու-
 թեամբը եղած չէ, և ան ալ մեծագոյն
 մասամբ բուն իսկ ձեր ձեռօքն ու գըրգ-
 ութութեամբը եղած է: Աւստի աս բանե-
 րուն վրայ նորէ նոր դառնալ մեզի հետ
 կագելնիդ կատարելութեան և ամբողջ
 մարի նշան չէ:

Փիլիպպոս Անեկրատի առողջ խելք
 կը մաղթէ:

Յ. Գ. Հռոմայ քահանայապետին
 դէմ ձեզի անհաճոյ խօսքեր լսել չէք ու-
 զեր նէ, զգուշացիք անոր խօսքը մեզի ը-
 նելու: Ձեր ահանաւորներէն մէկուն

խօսքը կը յիշեմ որ, « Այն զուրյուածի
կը տանինք, Վարին դէմ ըսուածներուն
չենք կրնար տանիլ » կ'ըսէր : Աեր ըսածն
ալ անոր պատասխանն է :




Խ . Գ . ՄԻՍԱԲԵԱՆ

ՎՐԻ ՊԱԿԲ

Երեւ	Միւս	Ուշիւ
1	կատարելագոյններն	կատարելագոյններն
29	իյնալ	իյնայ
58	հաւատքի երկրին	հաւատքին երկրի
44	գնացիր	քնացիր
47	ինքնիշխանու թեան	ինքնիշխանու թիւնն







1854